ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Նախաբան.....2
2. Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին.....3
3.Դպրոցի նկարագիրը.....9
4.Դպրոցի առաքելությունը..... 10
5. Իրավիճակի նկարագրություն
5.1 Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան.....11
5.2 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը.....17
5.3 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը.....20
5.4 Կառավարման և խորհրդակցական մարմիններ.....22
5.5 Աշակերտական համակազմ: Սովորողների կարողությունների և հմտություններիզարգացումը.....30
5.6 Մանկավարժական համակազմ: Մանկավարժական համակազմի որակական բարելավումը 35
5.7 Համագործակցումը համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ.....41
5.8 Ուսումնական միջավայր.....46
5.9 Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների.....52
5.10 Տեխնոլոգիաներ և նորարություններ.....57
6. Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններ և վտանգներ.....60
7. Դպրոցի զարգացման նախընտրելի ուղղությունները.....63
8. Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական նպատակները և խնդիրները, կարողությունները և կատարման ժամկետը:Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը: Զարգացման ծրագրի հնարավոր ռիսկերը.....64
9.Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները.....67
10.Զարգացման ծրագրի գնահատման չափանիշներն ու վերահսկողությունը.....69
11. Ակնկալվող արդյունքները.....74
12. Եզրափակում.....75

ՆԱԽԱԲԱՆ

Այսօր աշխարհում տեղի ունեցող մարտահրավերներին ի պատասխան պարտավոր ենք ստեղծել կրթության որակապես նոր համակարգ, զերծ մնանք ավանդական ստանդարտ ձևաչափերից և ձևավորել այլընտրանքային մոտեցում: Ավանդական կրթության տրամաբանությունից պետք է տեղափոխվենք զարգացման,ուժեղացման և մրցունակության բարձրացման մակարդակի: Զարգացման համար անհրաժեշտ է գիտելիքի անընդհատ շրջապտույտ,այդ իսկ պատճառով մենք պարտավոր ենք ժամանակակից աշխարհի պահանջներին համահունչ քայլել, այլապես կունենանք հետընթաց:
Այսօր պետության ապահովման և հզորացման գործում հիմնախնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ արժանապատիվ քաղաքացու ձևավորումը:
Կրթությունը ՀՀ-ում երկրի զարգացման և հզորացման ,ազգային անվտանգության ապահովման երաշխիք է: 21-րդ դարի պետության հիմքը մրցունակ կրթական համակարգի ստեղծումն է:Առաջնային խնդիրներ են կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը,դրանց համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, մատչելի,հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար:
ՀՀ-ում բոլոր տիպի ուսումնական հաստատություններում կրթության քաղաքականությունն իրականացնում է ՀՀ կառավարությունը:Կրթությունը անձի,հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է,որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելուն:
Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է,որի հիման վրա իրականացվում և պլանավորվում է առաջիկա 5 տարիների աշխատանքները:Այն սահմանում է դպրոցի զարգացման ռազմավարությունը,անձնակազմի և նյութական ռեսուրսների առանձնահատկությունները և հիմնախնդիրները: Ծրագրի հիմքում դրվել են նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը,ինչպես նաև Սվերդլով համայնքի առանձնահատկությունները:

2.Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ

Հաստատության անվանումը
«ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Պետռեգիստրի վկայականի գրացման համարը՝ 92.210.00460
Վկայականի համարը՝ 09112017-06-0011
ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային բաժնում գրանցված է 09.11.2017թ.
Ծածկագիրը՝ 06-101-0036-0018
«ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատվել է (նոր խմբագրություն) ՀՀ Լոռու մարզպետի 04.09.2017թ. թիվ 309-Ա որոշմամբ, գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Ստեփանավանի տարածքային բաժնում 20.09.2017թ.,փոփոխության է ենթարկվել՝ 20.10.2020թ. թիվ 885-Ա որոշմամբ և 14.06.2022թ. թիվ 360-Ա որոշմամբ:
Պետական իրավունքները՝ՀՀ զինանաշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք,ձևաթղթեր,ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,փոստային դասիչ 1920, գյուղ Սվերդլով ,1-ին փողոց,7-րդ փակուղի 1շ
Տարածքը՝ 2643.9 քմ
Հողատարածքը՝ 2.5 հա
Հեռախոսահամար՝ +374 94 23 63 35
Էլեկտրոնային հասցեն՝ sverdlov@schools.am
Ինտերնետային կայքի հասցեն՝https://sverdlov.schoolsite.am
ՀՎՀՀ-06403577
Դպրոցն իր գործունեությունն իրականացնում է սահմանված կարգով ստացված լիցենզիաների հիման վրա.
1.Տարրական հանրակրթական ծրագիր-N0335,տրված 15.06.2011թ.-120տեղ
2.Հիմնական հանրակրթական ծրագիր-N0330,տրված 15.06.2011թ.-170տեղ
3.Միջնակարգ հանրակրթական ծրագիր-N0271,տրված 15.06.2011թ.-90տեղ
4.Նախադպրոցական կրթական ծրագիր-N0531,տրված 26.10.2018թ.-40տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԻԱ Ա

ԼԻՑԵՆԶԻԱ № 0531

Սույնով վավերացվում է, որ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋԱԿԱԿԱՂ ԴՊՐՈՑ» ՊՈՒԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը)
ՀՀ Լոռու մարզ, համայնք Լոռի Բերդ, գյուղ Մվերդլով
(գտնվելու վայրը)
ՀՀ Լոռու մարզ, համայնք Լոռի Բերդ, գյուղ Մվերդլով
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու
Նախադպրոցական կրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ *Ա. Հարությունյան*
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «26» *հոկտեմբերի* 2018 թ.
Աճեմակինա
(վավերացնող պաշտոնյայի մասնագիտությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՏՈՂՈՒՄԸ հանրակրթական
(դասագրի անվանումը)
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0335

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋԱԿԱԿԱՂ ԴՊՐՈՑ» ՊՈՒԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը)
Լոռու մարզ, գ. Մվերդլով
(գտնվելու վայրը)
Լոռու մարզ, գ. Մվերդլով
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու
Տարրական հանրակրթական
(դասագրի անվանումը)
հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ *Ա. Աբրահամյան*
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «15» *հուլիսի* 2011 թ.
Աճեմակինա
(վավերացնող պաշտոնյայի մասնագիտությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՄԻՋԱԿԱԿԱՂ հանրակրթական
(դասագրի անվանումը)
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0271

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋԱԿԱԿԱՂ ԴՊՐՈՑ» ՊՈՒԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը)
Լոռու մարզ, գ. Մվերդլով
(գտնվելու վայրը)
Լոռու մարզ, գ. Մվերդլով
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու
Միջնակարգ հանրակրթական
(դասագրի անվանումը)
հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ *Ա. Աբրահամյան*
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «15» *հուլիսի* 2011 թ.
Աճեմակինա
(վավերացնող պաշտոնյայի մասնագիտությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական
(դասագրի անվանումը)
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0330

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋԱԿԱԿԱՂ ԴՊՐՈՑ» ՊՈՒԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը)
Լոռու մարզ, գ. Մվերդլով
(գտնվելու վայրը)
Լոռու մարզ, գ. Մվերդլով
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու
Հիմնական հանրակրթական
(դասագրի անվանումը)
հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ *Ա. Աբրահամյան*
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «15» *հուլիսի* 2011 թ.
Աճեմակինա
(վավերացնող պաշտոնյայի մասնագիտությունը)

2019-2024թթ.ընթացքում դպրոցի տնտեսված գումարներով կատարվել են բազմաթիվ աշխատանքներ:

2021 թ. Հիմնանորոգվել է դպրոցում գործող ճաշարանը ՄԱԿ-ի պարենի համաշխարհային «Դպրոցական սնունդ» ծրագրի աջակցությամբ: Հատակը սալիկապատվել է, դռներն ու պատուհանները փոխարինվել են նորով: Ձեռք է բերվել անհրաժեշտ խոհանոցային գույք:

2019-2024 թթ. ուսումնական տարիների ընթացքում կատարվել են բազմաթիվ աշխատանքներ: Նորոգվել են միջանցքները, հատակը սալիկապատվել է:

Հանդիսությունների դահլիճը մասամբ կոսմետիկ վերանորոգվել է, հատակը՝ սալիկապատվել:

Մարզադահլիճի դուռը և պատուհանները փոխարինվել են եվրոպատուհաններով ու եվրոդռներով:

2023 թ. Տաշիր + տախի մրցույթային դրամաշնորհում դպրոցը շահել է և ձեռք է բերել մարզագույք, բարեկարգվել է ֆուտբոլի և վոլեյբոլի դաշտերը:

2020 թվականից դպրոցում գործում է աղջիկների և տղաների ֆուտբոլային թիմեր: Նրանք մասնակցում են տարբեր տարիքային մրցաշարերի և ունենում են զգալի հաջողություններ: Նրանց մրցաշարերը կազմակերպվում են ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում , այլև՝ Վրաստանի Հանրապետությունում:

2023 թ. «Արգինա» մշակութային հասարակական կազմակերպությունը «Դպրոցական ագրո-էկո կենտրոնների ցանցի ստեղծում» ծրագրի շրջանակներում Սվերդլովի միջնակարգ դպրոցին նվիրաբերել է 1 հատ ջերմոց, այնտեղ ուսումնափորձնական աշխատանքներ կատարելու, տնկիներ աճեցնելու նպատակով:

Դպրոցում կազմակերպվել են տարատեսակ համադպրոցական միջոցառումներ և բաց դասեր հետևյալ խորագրերով.

«Հայոց բանակ»
«Հայաստանի Երրորդ Հանրապետությունը»
«Հայաստանս երգերի մեջ»
«Ես հայ եմ»
«Աշնան գույների մեջ»
«Սասնա ծռեր»
«Բնական աղետները գլոբալ հիմնախնդիր»
«Ա տառի հանդիսավոր բացումը»
«Այբբենարանի տոն»
«Երեխաների իրավունքները»
«Եվրախորհրդի կազմավորումը»
«Թումանյանական շաբաթ»
«Կանանց միջազգային տոն»

«Եղիր գրագետ և պաշտպանված թվային միջավայրում» մեդիագրագիտության,թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման նախագծի շրջանակներում աշակերտները մասնակցելով մրցույթին ստացել են հավաստագրեր:

Տվյալներ դպրոցի գրադարանի և դրա գործունեության մասին

Ցուցանիշ	**Տվյալներ**
Գրադարանի տարածքը	35քմ
Գրադարանի ֆոնդում առկա գրքերը	1190
Ընթերցասրահ	չկա
Գրապահոցի տարածք	չկա
Համակարգիչ	չկա
Ինտերնետ կապ	չկա
Գեղարվեստական գրքեր	821
Բառարաններ,շտեմարաններ,հանրագիտարաններ,ատլասներ	86
Ուսումնամեթոդական ձեռնարկներ	47
Ամսագրեր	չկա
Գրադարանից օգտվողների թիվը ամսեկան	15-20

Տվյալներ ուսումնական հաստատության լաբորատորիաների,կաբինետների ,դահլիճների մասին

Լաբորատորիներ,կաբինետներ,դահլիճներ	Տարածք	Վերանորոգման կարիք
Աշխարհագրության լաբորատորի	չկա	
Քիմիայի լաբորատորի	չկա	
Կենսաբանության լաբորատորի	չկա	
Ֆիզիկայի լաբորատորի	չկա	
Համակարգչային կաբինետ	կա	Կա, առանձնացնել Արմաթլաբորատորիայից
Արմաթ լաբորատորիա	կա	
Շախմատի կաբինետ	կա	Առանձնացնել ՆԶՊ-Ի կաբինետից
Ռազմագիտության կաբինետ	կա	Հրաձգարան չկա

Տվյալներ սննդի կետի վերաբերյալ

Հաստատությունում առկա է սննդի կետ՝ճաշարան 32 քմ տարածքով,որը նախատեսված է տարրական 46 աշակերտների համար:հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներն ու օրվա ճաշացանկը:Ճաշարանը վերանորոգված է,առկա են լվացարանի ,հիգենիայի պարագաներ,տաք և սառը հոսող ջուր:

3.Դպրոցի նկարագիրը

Լոռու մարզի Սվերդլով գյուղի դպրոցը հիմնադրվել է 1932 թվականին որպես յոթնամյա դպրոց,այնուհետև 1957 թվականին դարձել է միջնակարգ:
Դպրոցի առկա շենքը կառուցվել է 1987 թվականին՝ երկհարկանի երեք մասնաշենքով տիպային նախագծով: 1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժը վնասել է դպրոցի շենքը: Մինչև 1991 թ. դասերը

ժամանակավորապես կազմակերպվել են տնակներում: 1989-91 թթ. դպրոցի շենքը մասնակի վերանորոգվել է: Դպրոցի 3 մասնաշենքերից այժմ գործում են 2 մասնաշենքերը:
Դպրոցն ունի վերանորոգման կարիք:Շենքի նախագծային հզորությունը նախատեսված է 420 աշակերտի համար:Սվերդլովի միջնակարգ դպրոցը 2000 թվականին մասնակցել է դպրոցների բարելավման ծրագրին և 2001 թվականին մասնակիորեն դպրոցը վերանորոգվել է:2006 թվականին դպրոցն անցել է լոկալ ջեռուցման համակարգի(բաքսի):
2012 թվականին դպրոցում բացվել է նախակրթարան:
Դպրոցի հողատարածքը կազմում է 2.5 հա,որը ցանկապատված չէ:

4.Դպրոցի առաքելությունը

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է.
«Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է»:
Առաքելությունը կազմակերպության գոյության պատճառների նկարագիրն է:
«ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի առաքելությունն է՝
1. Ապահովել ՀՀ Լոռու մարզի Սվերդլով գյուղի երեխաների կրթության իրավունքի իրացումը նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ հանրակրթական պետական չափորոշիչներին համապատասխան ուսուցման միջոցով, որը պետք է նպատակաուղղված լինի սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը:

2. Ապահովել յուրաքանչյուր սովորողի,այդ թվում կրության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող , առավել ներգրավվածությունն ուսումնադաստիարակչական գործընթացում, իրենց ունակություններին,կարողություններին,հմտություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում:
3. Նպաստել սովորողի անձին՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և 21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ շրջանավարտի կրթությանը:
4.Ապահովել ռազմահայրենասիրական ոգով դաստիարակություն, կրթել ու դաստիարակել ազգային արժեքներ կրող,ազգային մտածելակերպ ունեցող քաղաքացիներ:
5. Դպրոցը դարձնել համայնքի կրթամշակութային կենտրոն:
Ապահովել աշակերտների և աշխատակիցների մասնակցությունը համայնքի խնդիրների լուծման գործընթացներին:Դպրոցում ստեղծել ժամանակակից գրադարան համահունչ ՏՀՏ-ներին,գրականությանը,ուսումնական ձեռնարկներին:Կարևորում եմ ընթերցասրահի առկայությունն ու հագեցվածությունը՝ համայնքում հանրային գրադարան չլինելու պատճառով:
Այսօր ուժեղ Հայաստան ունենալու հիմքը դպրոցն է,որը պետք է դաստիարակի հայրենասեր,գիտակից,բարոյական և մարդկային արժեքներով օժտված,սեփական իրավունքներն ու պարտականությունները գիտակցող քաղաքացի:
Դպրոցի առաքելությունը բարձր մակարդակով իրականացնելու համար կարևորում եմ իմ գործունեության ընթացքում առաջնորդվել հետևյալ կարգախոսով՝

«Միասին կարող ենք հասնել նպատակին»

Դպրոցի առաքելությունն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ են նյութական,ֆինանսական և այլ ռեսուրսներ, ամենակարևորը՝ արդյունավետ կառավարման համակարգ:

5. Իրավիճակի նկարագրությունը

5.1 Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Դպրոցն ունի 3 մասնաշենք,գործում են միայն դպրոցի 2 մասնաշենքերը, իսկ 3-րդ մասնաշենքը գտնվում է անմխիթար վիճակում և ունի հիմնովին վերանորոգման կարիք:Դպրոցը կառուցված է երկհարկանի տիպային նախագծով,մասնակիորեն վերանորոգված է,ունի ընդարձակ ու լուսավոր դասասենյակներ:Դպրոցում պահպանվում են անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնները: Դպրոցի տարածքը ցանկապատված չէ, այդ իսկ պատճառով դպրոցի բակը գտնվում է անխնամ վիճակում և զուրկ է գեղագիտական միջավայրի պայմաններից: Դպրոցի մուտքի մոտ կա թեքահարթակ՝կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

երեխաների համար: Դպրոցում առկա են 14 դասասենյակ,6 առանձնասենյակ,1 գրադարան,1 մարզադահլիճ,1 հանդերձարան,1 արհեստանոց,1 բուժկետ,1 ճաշարան,համակարգչային դասասենյակ,որտեղ գործում է նաև Արմաթ ինժեներական լաբորատորիան,4 տեխնիկական նշանակության այլ սենյակ,5 սանհանգույց, 3 առարկայական լսարան,1 շախմատի և 1 նզպ-ի դասարան,որը գործում է միասին:

Դպրոցը գործում է մեկ հերթով և հնգօրյա աշխատանքային ռեժիմով:Դպրոցում առկա է ինտերնետ կապ:

Դպրոցը մասնակի ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:

2023-2024 ուսումնական տարում դպրոցում սովորում են 116 աշակերտ. կոմպլեկտավորվել է 12 դասարան՝ համապատասխան աշակերտական սեղան աթոռներով, առանձին գործում է նախակրթարանի ավագ խումբ՝ 5 տարեկանը տարվա ընթացքում լրացած և մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը լրացող 4 սաներով,հագեցված համապատասխան գույքով և անհրաժեշտ ուսումնաօժանդակ պարագաներով:

Դպրոցում աշխատում են 24 մանկավարժ,11 ուսումնաօժանդակ աշխատակիցներ:

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորներ
Վարչական անձնակազմ	
Տնօրեն	1
Տնօենի տեղակալ ուսումնական գծով	1
ՄԿԱ գծով փոխտնօրեն	1
Վարչատնտեսական մասի համակարգող	Թափուր
Հաշվապահ	1
Տնտեսվար	Թափուր
Ընդամենը	4
Ուսումնաօժանդակ անձնակազմ	
Ձինողեկ	1
Քաղպաշտպանություն	0.3
Համակարգող- օպերատոր	1
Գրադարանավար	1
ԴԱԿ	1
Հոգեբան	Թափուր
Սոց. Մանկավարժ	Թափուր
Ուսուցչի օգնական	1
Ընդամենը	5.3
Սպասարկող անձնակազմ	
Հավաքարար	4
Գործավար	1
Հնոցապահ	Թափուր
Խոհարար	1
Ընդամենը	6
Աշխատողների ընդհանուր թիվը	35

Շենքային պայմանների, նյութատեխնիկական բազայի ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

• Դպրոցի շենքը տիպային երկհարկանի է • Գործում է Ա և Բ մասնաշենքերը • Առկա է վոլեյբոլի դաշտ • Ֆուտբոլի հրապարակի վերանորոգված տարածք • Հանդիսությունների դահլիճ,որի պատուհանները փոխարինվել են եվրոպատուհաններով • Ճաշարանը վերանորոգված է	• Դպրոցի Գ մասնաշենքը գտնվում է անմխիթար վիճակում, դռներ , պատուհաններ առկա չեն, ունի հիմնանորոգման կարիք • Դպրոցի տարածքը ցանկապատված չէ, զուրկ է գեղագիտական միջավայրից • Դպրոցի դարպասները առկա չեն, բակը և հարակից տարածքները բարեկարգված չեն, զուրկ են ծառերից և ծաղկանոցից • Ճաշարանում աշակերտների համար նախատեսված աթոռները հին են • Հանդիսությունների դահլիճում աթոռներ չկան, դուռը հին է • Դպրոցի 56 մքռ.տարածք ունեցող նկուղը չի գործում, ունի վերանորոգման կարիք, որի առկայությունը շատ կարևոր է և՛ որպես ապաստարան ,և՛ որպես հրաձգարան օգտագործելու համար • Սպորտդահլիճը չունի գույք

Դպրոցի ենթակառուցվածքները

Առկա են	Առկա չեն
• Արմաթ ինժեներական լաբորոտորիա, որը կից է համակարգիչների դասասենյակին • Հանդիսությունների դահլիճ • Սպորտդահլիճ • Ճաշարան • Նախակրթարան • Գրադարան • ՆԶՊ դասասենյակ, կցված շախմատի դասասենյակին • Աշխատասենյակներ • Դասարաններ • Սանհանգույցներ • Պահակակետ	• Բուժկետ • ԲՏՃՄ լաբորատորիաներ • Առարկայական դասարաններ • Հրաձգարան • ԿԱՊԿՈՒ աշակերտների համար առանձնացված դասասենյակ • Ապաստարան • Ընթերցասրահ • Հանդերձարան • Արհեստանոց • Ծնողական և աշակերտական խորհրդի հանդիպումների համար նախատեսված սենյակ

Շենքային պայմանների վերլուծություն

Դպրոցի կառուցման տարեթիվը	1987
Հողամասի մակերեսը	2,5 հա
Տարածքը	2643,9քմ
Շենքի մակերեսը	1300քմ
Հարկայնությունը	2
Նկուղը	56քմ
Նախագծային հզորությունը	420
Աշակերտների թիվը	116
ԿԱՊԿՈՒ	3
ՆՈՒՀ-ի թիվը	4 2023-24ուսումնական տարի
Կրթական լիցենզիաներ	120 տարրական 170 հիմնական 90 միջնակարգ 40 նախադպրոցական
Շենքի նկարագիրը	Երկհարկանի տիպային դասավորված 3 մասնաշենքերով
Տանիքը	Հիմնանորոգման և ջերմամեկուսացման կարիք ունի
Դռներ, պատուհաններ	Ա և Բ մասնաշենքերում վիճակը բավարար
Դպրոցի Գ մասնաշենքը	1988թ, երկրաշարժիչ հետո չի նորոգվել,պատուհաններ,դռներ առկա չեն,Գ մասնաշենքը չի շահագործվում և ունի հիմնանորոգման կարիք: Հիմնանորոգվելուց հետո մասնաշենքում առկա կլինեն առարկայական դասասենյակներ,լաբորատորիաներ և արհեստանոց
Դասասենյակների ներքին հարդարում և վերանորոգում	Դասասենյակները գործում են միայն Ա և Բ մասնաշենքերում;6 դասասենյակներում կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ,7 դասասենյակներ վերանորոգման կարիք ունեն: Միջանցքները նորոգված են:Մարզադահլիճը նորոգման կարիք ունի

Ջեռուցումը	Լոկալ
Ջրամատակարարումը	Մշտական
Գազամատակարարումը	Մշտական
Էլեկտրամատակարարումը	Մշտական
Կոյուղի	Վերանորոգման կարիք ունի

Նյութատեխնիկական բազայի ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմը	Թույլ կողմը
• Ինտերնետ կապը • Համակարգիչներ • Նոթբուքեր • Տպիչներ • Պրոյեկտոր • Քարտեզներ • Ատլասներ • Գլոբուսներ • Դասագրքեր • Գեղարվեստական գրքեր • Ուսումնաօժանդակ նյութեր • Մեթոդական ձեռնարկներ • Շտեմարաններ • Աշակերտական սեղան, աթոռներ • Պահարաններ • Սպորտային պարագաներ • Նախակրթարանի համար անհրաժեշտ պարագաներ	• Էլեկտրոնային գրատախտակ • Փորձարարական և դիդակտիկ նյութեր և պարագաներ • Երկրաչափական մարմիններ • Երաժշտական գործիքներ • Արհեստանոցի համար անհրաժեշտ սարքավորումներ ու դետալներ • ԿԱՊԿՈՒ աշակերտների համար անհրաժեշտ պարագաներ

Նյութատեխնիկական բազայի անհրաժեշտությունը դասապրոցեսին օժանդակող և անբաժանելի գործընթացներից է, որն էլ ավելի արդյունավետ, հետաքրքիր ու բովանդակալից է դարձնում դասը: Յուրաքանչյուր առարկան որքան հագեցած է լինում նյութատեխնիկական բազայով, այնքան ավելի է մեծանում հետաքրքրությունը աշակերտների մոտ թե՛ առարկայի նկատմամբ, թե՛ ձեռք բերված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձևավորման զարգացման համար:

Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան (բացի պետական բյուջետային միջոցներից) հագեցնելուց, հարստացնելու համար անհրաժեշտ է կատարել այլ միջոցներով՝ գտնել բարերարներ, ովքեր պատրաստ են օժանդակելու:

Նպատակը՝

Բարելավել դպրոցի շենքային պայմանները, հարստացնել և արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ կրթության որակի բարելավմանը նպաստելու համար:

Խնդիր՝

Նյութատեխնիկական բազայի բարելավման առաջին կարևոր քայլը եղածի արդյունավետ պահպանումն ու օգտագործումն է, այնուհետև նորի ձեռքբերումը:

Նպատակին հասնելու ուղիները՝

- Դպրոցի բակի ցանկապատում,տարածքի բարեկարգում՝ կանաչապատում,ծառատունկ,մաքրության իրականացում և պահպանում
- Դպրոցի և դասարանների ընթացիկ վերանորոգում
- Նոր գույքի ու նյութատեխնիկական բազայի համալրում նորացված սարքավորումներով
- Համակարգչային կաբինետի վերանորոգում և Արմաթ լաբորատորիայից առանձնացում
- Գրադարանի վերանորոգում ,հարուստ գրադարանային ֆոնդ՝ գեղարվեստական գրքեր,նոր ձեռնարկներ ու առարկայական ծրագրեր,ընթերցանության համար կահավորված ու հարմարավետ պայմաններ

Հնարավոր ռիսկեր՝

- Ոչ բավարար ֆինանսական հնարավորություններ
- Արտաբյուջետային միջոցների ոչ առկայությունը
- Բնական աղետներ
- Համաճարակ
- Պատերազմ

Ռիսկերը մեղմացնող ուղիներ՝

- Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցներ ձևավորելու համար
- Արտակարգ իրավիճակներում գործողությունների ճիշտ համակարգում
- Օգտագործել ունեցած նյութատեխնիկական բազան, հինը վերանորոգել և նոր շունչ հաղորդել

Արդյունքներ չափման մեխանիզմեր՝

- Մշտադիտարկում և վերահսկողություն
- Հարմարավետ և տրամադրող ուսումնական միջավայր

Ակնկալվող արդյունքը՝

- Հարմարավետ դասասենյակներ՝ նոր գույքով
- ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցված պայմաններ (դասարան, սանհանգույց)

- Ունենալ որակյալ ինտերնետ կապ
- Ցանկապատված և հաճելի բակ , ծաղկանոց
- Ընթերցասրահ
- Մարզագույք
- Որակյալ կրթական գործընթաց

Անհրաժեշտ միջոցներ՝

Դպրոցի ֆինանսական բյուջեից և բարերարների կողմից ցուցաբերած աջակցություն

Ժամկետ և պատասխանատուներ

2024-2029թթ./տնօրեն,փոխտնօրեն,վարչատնտեսական մասի համակարգող/

Գնահատման սանդղակ

Գործողություններ	Կատարողական			
	ոչ բավարար	բավարար	լավ	գերազանց
	0-25 %	25-50 %	50-75 %	75-100 %

5.2 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը,ինչպես նաև արտաբյուջետային միջոցների ձեռքբերումը դպրոցավարության կարևոր հարցերից է:Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը թափանցիկ է:Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները սահմանված կարգով տեղադրվում են դպրոցի կայքում:Դպրոցի նախագիծը ,ըստ կանոնադրության պահանջի, քննարկվում է կառավարման,մանկավարժական,ծնողական և աշակերտական խորհուրդների հետ՝ առաջարկություններ ստանալու նպատակով,այնուհետև ներկայացվում է լիազոր մարմնի հաստատմանը:

Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են՝

- Աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումներ (ներառյալ եկամտահարկը)
- Կոմունալ ծախսեր
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- Կապիտալ ծախսեր
- Այլ ծախսեր

	2021-22թթ.	2022-23թթ.	2023-24թթ.

Հաստատության ընդհանուր բյուջեն	46185800	50486898	72564200
Աշխատավարձի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը (հաշվարկված աշխատավարձերի վճարման հոդվածով՝ ներառյալ հարկերը)	40022451	42487860	63110000
Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը	3315687	4824229	3880000
Նոր գույքի,այդ թվում սարքավորումների ձեռքբերման,նորոգման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը	2207662	2939128	870000
Տնտեսում	959830	235681	2594700

Ֆինանսական աճողականություն



Ինչպես երևում է աղյուսակում ներկայացված տվյալներից,վերջին տարիների ընթացքում դպրոցը 2 միլիոն դրամից ավել գումար է հատկացրել նորոգման աշխատանքներին և գույքի ձեռքբերմանը:Արդյունքում բարվոք տեսք են ստացել դպրոցի միջանցքները, բարեկարգվել են նախակրթարանի հարակից տարածքը և սանհանգույցները: ՄԱԿ-ի «Դպրոցական սնունդ» ծրագրի աջակցությամբ հիմնանորոգվել է խոհանոցը և ճաշարանը: Նախատեսվում է մոտ ապագայում տարրական դասարանների աշակերտներին սննդի տրամադրումն իրականացնել հարմարավետ նոր գույքի ձեռքբերմամբ :
Առաջիկա տարիներին ֆինանսավորման գործող կարգի և աշակերտների կանխատեսվող թվերի պահպանման շնորհիվ դպրոցը հնարավորություն կունենա յուրաքանչյուր տարի 1.5-2 միլիոն դրամ հատկացնել նորոգման և գույքի ձեռքբերման աշխատանքներին:

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ

• Պետական բյուջեն բավարում է աշխատակազմի աշխատավարձը ժամանակին վճարելուն • Շենք-շինությունների պահպանման,ընթացիկ վերանորոգման համար նպատակային ծախսեր է կատարվում • Բյուջեից տրամադրվում է բավարար գումար ՏՀՏ-ը սարքերի պահմանման և նորոգման համար,կոմունալ ծախսերի և այլ ծախսերի համար	• Բյուջեի սղության պատճառով մեծ ծավալի շինարարական աշխատանքներ չեն կատարվում • Չկա բարերարների և համայնքի կողմից ներդրումներ • Վճարովի ծառայությունների կարիքի գնահատման վերլուծության բացակայություն

Նպատակը՝
Ֆինանասական միջոցների ավելացում,պլանավորում և արդյունավետ օգտագործում

Խնդիրը՝
Արտաբյուջետային միջոցների ձևավորում,ֆինանսական կրթական ծրագրերին մասնակցություն

Նպատակի իրագործման գործողությունները՝

- Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում
- Դպրոցի գործունեության,ակտիվ և հագեցած առօրյայի լուսաբանում
- Ուսուցիչների պարտադիր ատեստավորման համար վերլուծել ուսուցչի կրթական վերապատրաստումներին հատկացվող միջոցների արդյունավետությունը
- Մասնակցել կրթական ծրագրերի մրցույթների,ունենալ ֆինանսական դրամաշնորհներ

Ռիսկեր՝

- Ֆինանսի ոչ բավարար տնտեսումներ
- Պետական բյուջեի սղություն
- Բարերարներ չգտվելու վտանգ
- Դրամաշնորհ չստանալու վտանգ
- Ֆորսմաժորային իրավիճակներ

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- Բյուջեի ճիշտ պլանավորում
- Նախահաշվի ճիշտ կազմում
- Ֆինանասական միջոցների արդյունավետ կառավարում

- Պարբերաբար հաշվետվություններ կառավարման խորհրդում,խորհրդակցական մարմիններում

Ակնկալվող արդյունքները՝

Ժամանակակից ուսումնական և ֆիզիկական,հոգևոր և կրթական որակի բարելավում

Արդյունքների չափման մեխանիզմներ
Մշտադիտարկում,վերահսկողություն և հաշվետվություն

Միջոցներ-Մարդկային ռեսուրսներ
Բարերարներ

Պատասխանատուներ-Տնօրեն,համակարգող

Ժամանակացույց-2024-2029թթ.

Այս նպատակով հատկացվելիք գումարները կարելի է ավելացնել դպրոցի կանոնադրությամբ ամրագրված ձեռնարկատիրական գործունեությունների իրականացման,ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների աջակցության ծրագրերի իրականացման շնորհիվ: Ակնկալում եմ նաև մեծ աջակցություն ծնողների և գյուղի բարերարների կողմից:

«Միասին ամեն ինչ կարող ենք»

5.3 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը

«ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Զարգացման ծրագրը» կազմելիս օգտագործվել են ոլորտը կարգավորող հետևյալ իրավական ակտերը .
«Կրթության մասին» ՀՀ օրենքը
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը
«Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» ՀՀ օրենքը
«ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը»
«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությունը
«Երեխայի իրավունքի մասին» ՀՀ օրենքը,օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակները,ներքին իրավական ակտերը,նորմատիվ փաստաթղթերը:
Դպրոցին վերաբերվող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով:
ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝08.09.2020թ. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը» № 28-Ն հրամանով հաստատված հավելվածով ներառված փաստաթղթերն են՝
1.Էլեկտրոնային դասամատյաններ
2.Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ
3.Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4.Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան

5.Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
6.Ավարտական,պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ
7.Էլեկտրոնային հաստիքացուցակ
8.Տարիֆիկացիոն մատյան
9.Դպրոցի մանկավարժական,առարկայական մեթոդական միավորումների, ծնողական,աշակերտական խորհուրդների նիստերի արձանագրությունների մատյաններ
10.Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
11.Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
12.Դպրոցի կանոնադրություն,ներքին կարգապահական կանոններ
13.Դպրոցի ամենամյա եկամուտների ու ծախսերի նախահաշիվ
14.Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան
15.Դասղեկների դաստիարակչական աշխատանքների տարեկան պլան

Վերոնշյալ փաստաթղթերը լրացվում են՝ համաձայն խորհրդակցական մարմինների՝մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի,աշակերտական խորհրդի, առարկայական մեթոդմիավորումների օրինակելի կանոնադրությունների հիման վրա մշակված կանոններով, որտեղ նկարագրվում է յուրաքանչյուր փաստաթղթի վարման գործընթացը և նշվում պատասխանատու անձը:

Նպատակը՝
Ուսուցիչներին իրազեկել դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին և մասնակից դարձնել կատարվող փոփոխություններին
Խնդիրը՝
Ապահովել ուսուցիչների մասնակցությունը իրավական ակտերի,նախագծերի քննարկմանը և բարձրացնել իրավական գրագիտությունը
Նպատակի իրագործման գործողություններ՝

- Իրավական ակտերի լուսաբանում
- Փոփոխված իրավական ակտերի վերաբերյալ քննարկումներ խորհրդակցական մարմիններում

Ռիսկերը՝
Ինտերնետ կապի թուլացում

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- Կանոնակարգված աշխատանք
- Հետևողական աշխատանք
- Ժամանակին վերահսկողություն

Ակնկալվող արդյունքների չափման մեխանիզմներ՝

- Խորհուրդների կողմից հաստատված հաշվետվությունների և արձանագրությունների ձևերը
- Մշտադիտարկում և վերահսկողություն

Ակնկալվող արդյունքներ՝

- Ունենալ որակյալ ինտերնետ կապ

- Ուսուցիչների և այլ շահառու անձանց իրավական գրագիտության բարձրացում

Միջոցներ՝
- Մարդկային ռեսուրսներ
- Նյութատեխնիկական բազայի արդյունավետ օգտագործում

Պատասխանատուներ՝
Տնօրեն,փոխտնօրեն,համակարգող,մեթոդմիավորման նախագահների,կառավարման և խորհրդակցական մարմինների նախագահներ

Գնահատման սանդղակ

Գործողություններ	Կատարողական			
	ոչ բավարար	բավարար	լավ	գերազանց
	0-25 %	25-50 %	50-75 %	75-100 %

5.4 Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Սվերդլովի միջնակարգ դպրոցի կառավարումն իրականացվում է ըստ կանոնադրության սահմանված կարգի:
Սահմանված կարգով ձևավորվել և գործում է «ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՀՀ Լոռու մարզի Ուռուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միացյալ կառավարման խորհուրդը՝ բաղկացած 14 անդամներից:

Միացյալ կառավարման խորհրդի կազմը՝

1.	Մուրադյան	Արա	Ցոլակի	բարձրագույն
2.	Ասուլյան	Լուսինե	Գառնիկի-	բարձրագույն
3.	Սարգսյան	Սերինե	Սերժիկի	միջնակարգ
4.	Չերքեզյան	Տաթևիկ	Սարգսի	միջնակարգ
5.	Զաքարյան	Անահիտ	Կոլյայի	բարձրագույն
6.	Բարսեղյան	Նարինե	Շամիրի	բարձրագույն
7.	Սերոբյան	Անի	Սամվելի	միջնակարգ
8.	Բաղոյան	Ֆլորա	Ռուսլանի	միջնակարգ
9.	Ավագյան	Էդիկ	Հրաչիկի	բարձրագույն
10.	Ջուլհակյան	Սերգո	Ռազմիկի	բարձրագույն
11.	Հակոբյան	Արծրուն	Սամվելի	բարձրագույն
12.	Անդրեասյան	Նեկտարինա	Հրաչիկի	միջին/մասն
13.	Առաքելյան	Արփիկ	Ժորիկի	բարձրագույն

14.	Ավետյան Նարինե Սահակի	բարձրագույն

Հաստատության խորհուրդն իրականացրել է՝

- Ընթացիկ վերահսկողություն տնօրենի գործունեության նկատմամբ
- Քննարկել և հավանություն է տվել հաստատությունների հաստիքացուցակներին և տարիֆիկացիոն ցուցակներին
- Քննարկվել է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունները
- Ներքին գնահատման արդյունքները
- Իրականացրել է օրենքով իրեն վերապահված և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Համաձայն Սվերդլովի միջնակարգ դպրոցի կանոնադրության՝ հաստատությունում գործում են հետևյալ կառավարման և խորհրդակցական մարմինները.

Ստորև ներկայացնում ենք հետևյալ աղյուսակի տեսքով.



Մանկավարժական խորհուրդը
ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի կազմը.

1.	Ղուկասյան Արմեն	Տնօրեն	42

2.	Այվազյան Ժիրիկ	Փոխտնօրեն	38
3.	Մագթաղյան Աննա	ՄԿԱ	35
4.	Անանյան Մարինե	Հայոց լեզու և գրականություն	38
5.	Կարապետյան Անժելա	Ռուսաց լեզու	36
6.	Գրիգորյան Գայանե	Ֆրանսերեն	31
7.	Ասուլյան Լուսինե	Պատմություն և հասարակագիտություն	20
8.	Այվազյան Լուիզա	Աշխարհագրություն և ՀԵՊ	17
9.	Տոնոյան Անահիտ	Մաթեմատիկա	14
10.	Ղուկասյան Նունե	Մաթեմատիկա	22
11.	Այվազյան Անահիտ	Ֆիզիկա,մաթեմ.,բնագիտ.	37
12.	Սահակյան Ռաֆիկ	Քիմիա և կենսաբանություն	38
13.	Մուրադյան Արա	Ֆիզկուլտուրա	26
14.	Գևորգյան Մովսես	Ֆիզկուլտուրա	9
15.	Մկրտչյան Արմեն	Ձիևղեկ	37
16.	Մամաջանյան Մերի	Դասվար	1
17.	Հունանյան Նառա	Դասվար	11
18.	Մարգարյան Թեյմինա	Դասվար	16
19.	Շահինյան Մայրամ	Հայոց լեզու և գրականություն	5
20.	Սաքուլյան Հասմիկ	նախակրթարանի դաստիարակ	2
21.	Հովասափյան Սերինե	Գրադարանավար	23
22.	Դոլմազյան Սյուզաննա	Ուս.Օգնական	10
23.	Գրիգորյան Անուշ	Դասվար	10
24.	Սահակյան Անի	ԴԱԿ	13

Մանկավարժական խորհուրդը բաղկացած է 24 մանկավարժներից, որոնք պատշաճ կարգով կատարում են կանոնադրությամբ իրենց վերապահված բոլոր գործառույթները: Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են հիմնականում բոլոր անդամների մասնակցությամբ՝ նախապես սահմանված օրակարգով: Անհրաժեշտության դեպքում հրավիրվում են արտահերթ մանկավարժական խորհրդի նիստեր: Սահմանված կարգի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա օգոստոսյան առաջին խորհրդակցությանը

- Ձևավորվում է մանկավարժական խորհուրդը,ընտրվում է խորհրդի նիստերի քարտուղար, հաստատվում է մանկավարժական խորհրդի աշխատակարգը մեկ ուսումնական տարի ժամկետով
- Քննարկվում է տվյալ ուստարվա դասաբաշխումը, դպրոցական բաղադրիչ ժամաքանակի բաշխումը,հաստատվում է դպրոցի ուսպլանը,քննարկվում է առարկայական մասնախմբերի ձևավորումը, կատարվում է մեթոդմիավորման նախագահների ընտրություն,կատարվում է դասարանների համակազմի քննարկում,քննարկվում և ներկայացվում է հաստատման դասղեկների, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների տարեկան աշխատանքային

պլանները,որոնք բխում են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից:

- Քննարկվում է խմբակների գործունեության և երկարօրյա ուսուցման հարցը
- Հաստատում է ԿԱՊԿՈՒ աշակերտների ցուցակը
- Քննարկվում է ուսուցիչների,ուսուցչի օգնականի,ՏՄԱԿ-ի մանկավարժական աշխատողների կողմից կազմված ԱՈՒՊ-ների լրացման կարգը:
- Լսում է դասագրքերի բաշխման,սոցիալապես անապահով սովորողների դասագրքերն անվճար տրամադրելու հարցը:

Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ,անհրաժեշտության դեպքում գումարվում է արտահերթ նիստ:
Մանկավարժական խորհրդի նիստերը թափանցիկ են:Նիստերին մասնակցելու համար խորհրդակցական իրավունքով, անհրաժեշտության դեպքում, հրավիրվում են ծնողներ, նաև աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ: Նիստերն արձանագրվում են ըստ սահմանված կարգի՝ եռօրյա ժամկետում:

Ծնողական խորհուրդ
Սվերդլովի միջնակարգ դպրոցի ծնողական խորհրդի կազմը.

1.Շահինյան Մայրամ
2.Սուղյան Արևիկ
3. Հունանյան Նառա
4.Գևորգյան Նունե
5.Այվազյան Աննա
6.Բարսեղյան Արփիկ
7.Այվազյան Գոհար
8.Քարտաշյան Օֆելյա
9.Գագինյան Ամալյա
10.Այվազյան Սիրարփի
11.Սարգսյան Տաթևիկ
12.Մինասյան Իրինա

Դպրոցի կողմից կազմակերպվող աշխատանքը միշտ թերի կլինի,եթե ծնողը դպրոցի և կրթության նկամամբ գտնվի անտարբեր:Երբ ծնողը ներգրավված և հետևողական է լինում երեխայի կրթության գործընթացում,աշակերտն ունենում է ավելի բարձր առաջադիմություն,ավելի լավ վարք և պատասխանատվություն:
Սվերդլովի միջնակարգ դպրոցի ծնողական խորհուրդը կազմված է 12 անդամներից:Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված նախագահից և երկու անդամից) ընտրվել են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից մեկ ուսումնական տարվա համար:
Ծնողական խորհուրդը կազմավորվել է դասարանների ծնողական խորհրդի նախագահներից: Նախագահը ընտրվել է փակ քվեարկությամբ՝ ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
Ծնողական խորհուրդը մասնակցում է դպրոցի ներքին կարգապահական կանոնների մշակմանը:
Ըստ կանոնադրության գումարվում են նիստերը հստակ օրակարգերով և լրացվում են նիստերի արձանագրությունների մատյանում:

Պետք է դպրոցում էլ ավելի ամրապնդել ծնող-ուսուցիչ կապի համագործակցությունը, ծնողների ներգրավվածությունը հաստատությունում դարձնել ավելի ակտիվ և նախաձեռնողական ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում:Այս նպատակով պետք է կազմակերպել ծնողների հետ սեմինարներ և քննարկումներ՝ ծնողներին իրազեկելով նաև կրթական ոլորտում տեղի ունեցող բոլոր բարեփոխումները:

Աշակերտական խորհուրդ
Սվերդլովի միջնակարգ դպրոցի աշակերտական խորհրդի կազմը

1.Այվազյան Անգելինա
2.Մովսեսյան Արամ
3.Գևորգյան Լիանա
4.Սահակյան Անուշ
5.Հովասափյան Անուշ
6.Սարգսյան Համլետ
7.Սահակյան Վահե

Աշակերտական խորհուրդը կազմված է յոթ անդամներից,որոնց կազմից ընտրված է նախագահ:Աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի ու վստահության մթնոլորտում,գործում է ժողովրդավարական սկզբունքներով, նախաձեռնում է թեմատիկ միջոցառումներ,նպաստում է ներքին կարգապահական կանոնների պահպանմանը,կատարում է հանրօգուտ աշխատանքներ,մասնակցում են շաբաթօրյակներին,դպրոցական միջոցառումներին,ինտելեկտուալ մրցույթներին,մեդիագրագիտության ու կիբեռանվտանգության դասընթացին,որը կազմակերպում է Լոռե երիտասարդական կենտրոնը,հանդես է գալիս առաջարկություններով,զրույցներ և սեմինարներ է անցկացնում սովորողների միջև խնդիրների լուծման նպատակով:Աշակերտական խորհուրդը օգնում է դպրոցում կանխել հնարավոր բացասական երևույթները:

Դպրոցում կրթության որակի բարձրացման համար կարևոր է ուսուցիչ-ծնող-աշակերտ կապի ակտիվ համագործակցությունը և մասնակցությունը դպրոցի կյանքին:Առհասարակ կա պատկերացում,որ դպրոցում խորհրդակցական մարմինները կրում են ձևական բնույթ և գործում են ի շահ դպրոցի տնօրենի:Այս պատկերացումը կանխելու համար պետք է կարևորել դպրոցում խորհրդակցական մարմինների դերն ու նշանակությունը և նպաստել այս մարմինների միմյանց հետ սերտ հարաբերությունները:

Առարկայական մեթոդական միավորումները-Դպրոցում գործում են երեք առարկայական մեթոդական միավորումներ՝ տարրական,հումանիտար,բնագիտական:



Առարկայական մեթոդական միավորումները ձևավորվում են հանրակրթական դպրոցներում կրթական գործունեությունը ավելի արդյունավետ կազմակերպելու համար:Առարկայական մեթոդական միավորումները կոչված են օգնելու ուսուցչին կատարելագործել իր վարպետությունը, սովորողներին ուսուցանել ու կրթել նոր,ավելի առաջադեմ մեթոդներով:Մեթոդմիավորումները ապահովում և օժանդակում են առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրերի կատարումը դպրոցում, քննարկում են կատարված դասալսումները,վերհանում առաջավոր մեթոդներն ու փորձը:Յուրաքանչյուր ամիս կազմակերպվում և արձանագրվում են մեթոդմիավորման նիստերը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կարևոր գործոններից է սովորողների ֆիզիկական,հոգևոր և սոցիալական առողջությանը միտված,կրթության որակի բարեփոխմանն ուղղված հետևյալ քայլերը՝

- Դպրոցում ձևավորել ուսուցման բարձր արժեհամակարգ
- Ապահովել դպրոցում արդյունավետ,ժամանակակից պահանջներին և նոր չափորոշիչներին համապատասխան կրթություն
- Նպաստել ուսուցման ծրագրային բովանդակության բարեփոխմանը և վերանայել դասավանդման մեթոդաբանությունը, ուշադրության առանցքում պահելով սովորողների կարողությունների ձևավորումը ,նրանց ինքնուրույն և քննադատական մտածողության հնարավորությունները,խթանել ինքնուրույն հետազոտական, նախագծային աշխատանքներին և ստեղծագործական մտածողությանը
- Դպրոցում ստեղծել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, հետևողական լինել բուլինգի դրսևորումներին, ուսումնական հաստատությունում բացահայտել և կանխարգելել բուլինգը: Բուլինգի կանխարգելման գործում

մեծ ազդեցություն ունեն թե՛ ուսուցիչները,թե՛ ծնողները,թե՛ համայնքը և թե՛ իրավապահ մարմինները:

- Նոր ՀՊՉ-ի ներդրում և դրա արդյունքում կրթության որակի բարելավում
- Ուսուցման նոր մեթոդների իմացություն և կիրառում,կրթության և դաստիարակության կազմակերպում
- Սովորողների ընկալման փոփոխություն կրթության և ուսուցման նպատակի վերաբերյալ

Կառավարման և խորհրդակցական մարմինների

Նպատակը՝

Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև ակտիվ համագործակցության ամրապնդում, դպրոց-ուսուցիչ-աշակերտ-ծնող-համայնք կապերի խթանում,խորհրդակցական մարմինների ներգրավվածության բարձրացումը ուսումնական պրոցեսում

Խնդիրը՝

- Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև ապահովել սերտ փոխհամագործակցության զարգացում,նախաձեռնողականության խթանում
- Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների կատարման աշխատանքներին,ապահովել գործառույթների վերաբերյալ իրազեկվածությունը, իրավունքներն ու պարտկանությունները
- Ակտիվացնել ծնողական և աշակերտական խորհուրդների դերը

Ռիսկեր՝

- Պայմանավորված ծնողների զբաղվածությամբ ոչ հաճախակի հանդիպումներ
- Ցանկության և մոտիվացիայի պակասը
- Գյուղական միջավայրի առանձնահատկություններով պայմանավորված հետաքրքրության բացակայություն,իրավագիտակցության ցածր մակարդակ

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ՝

- Մշտապես ապահովել դպրոց-ուսուցիչ-աշակերտ-ծնող-համայք կապերը
- Կարևորել կառավարման և խորհրդակցական մարմիններն ու դրանց նշանակությունը դպրոցավարման գործընթացում
- Պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկում կրթության,դաստիարակության,ԿԱՊԿՈՒ սովորողների ինտեգրման և բազմաթիվ հարցերի շուրջ
- Համագործակցության նկատմամբ բարձր հետևողականություն և կատարված աշխատանքի վերաբերյալ զեկուցումների ներկայացում կառավարման մարմիններին
- Կատարել օրենքին համապատասխան դպրոցավարություն

Արդյունքների չափման մեխանիզմներ՝

- Քնարկումների արդյունքում նիստերի արձանագրություն և համատեղ որոշումներ
- Ուսումնական հաստատության պաշտոնական կայքում հրապարակումներ նիստերի արձանագրությունների վերաբերյալ
- Տնօրինության կողմից մշտադիտարկում և վերահսկողություն

Ակնկալվող արդյունք՝

- Կրթությունն ու դաստիարակությունը գնահատող,դպրոցի առօրյաով ապրող,մանկավարժների և աշակերտների հետ համագործակցող,նախաձեռնող ակտիվ ծնողներ
- Ունենալ այնպիսի աշակերտներ ովքեր կունենան ինքնուրույն կողմնորոշում,քննադատական վերլուծություն,զրգացած լեզվական կարողունակություն
- Փորձառու մանկավարժական խումբ `մասնագիտական և դասավանդման նոր մեթոդներով օժտված

Անհրաժեշտ միջոցներ՝

- Մարդկային ռեսուրսներ,ՀՀ օրենքներ,ենթաօրենսդրական իրավական ակտեր

Պատասխանատուներ՝

Տնօրեն,կառավարման խորհուրդներ նախագահներ,դասղեկ

Գնահատման սանդղակ

Գործողություններ	Կատարողական			
	ոչ բավարար	բավարար	լավ	գերազանց
	0-25 %	25-50 %	50-75 %	75-100 %

5.5 Աշակերտական համակազմը: Սովորողների կարողությունների և հմտությունների զարգացումը

Աշակերտական համակազմը

Ցուցանիշը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Սովորողների թիվը տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	127	119	121	118
Սովորողների թիվըտվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	128	117	122	116
Ուստարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	1		1	
Ուստարվա ընթացքում տեղափոխված սովորողների թիվը		2		2

Աշակերտների թիվը ըստ դասարանների

1-ին դասարան-9 աշակերտ
2-րդ դասարան-16 աշակերտ
3-րդ դասարան-12 աշակերտ
4-րդ դասարան- 9աշակերտ
5-րդ դասարան-17աշակերտ
6-րդ դասարան-9 աշակերտ
7-րդ դասարան-12աշակերտ
8-րդ դասարան-11աշակերտ
9-րդ դասարան-4 աշակերտ
10-րդ դասարան-5 աշակերտ
11-րդ դասարան-9 աշակերտ
12-րդ դասարան-3 աշակերտ

2023-2024 ուստարում դպրոցում կոմպլեկտավորվել է 12 դասարան՝ 116 աշակերտներով:Համայնքում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեք աշակերտներ սոց մանկավարժի և հոգեբանի աջակցությունները ստանում են Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի

կողմից:Ամեն ուրբաթ դասերից հետո այցելում են դպրոց,հարկ եղած դեպքում կրթություն ստանում են հեռավար:
Նրանց ուսուցումն իրականացվում է ԱՈՒՊ-ով: Սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների սովորողներին տրվում է աջակցություն պետության կողմից տրվող դրամաշնորհի ձևով՝ դասագրքերի վարձավճարների զեղչման համար: Աշակերտների թվի աճն ավելին կլիներ,եթե մեր համայնքից արտագաղթ չլիներ: Վերջին տարիներին նկատվում է նաև 9-րդ դասարանից հետո ուսումը միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում շարունակող սովորողների թվի աճ:Իմ գործունեության առաջնահերթություններից է լինելու նաև հեռևողական աշխատանքների իրականացումը `սովորողների թվաքանակի ավելացման ուղղությամբ տարվող աշխատանքներում:Այս գործում հատկապես կարևորում եմ արտադասարանական խմբակների, տարբեր միջոցառումների և աշխատանքների կազմակերպումը՝ սովորողների հետաքրքրություններին համապատասխան: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել շնորհալի և ստեղծագործ աշակերտներին, նրանց ձեռքբերումներին և՛ դպրոցում,և՛ դպրոցից դուրս,քանի որ յուրաքանչյուր երեխայի տաղանդ պետական արժեք է:
Իմ գործունեության ընթացքում պետք է քայլեր ձեռնարկեմ սովորողների դաստիարակության կատարելագործման ուղղությամբ՝

- Ծնող-դպրոց կապի ամրապնդում
- Սեր ուսման նկատմամբ
- Առարկայական դասընթացներում ուշադրություն դարձնել թեմայի դաստիարակչական կողմին և կարողությունների ձևավորմանը
- Կազմակերպել հետաքրքիր միջոցառումներ,էքսկուրսիաներ,արշավներ հանուն ազգային,հոգևոր և մշակութային արժեքների ճանաչման ու պահպանման համար
- Հետևողական լինել դասղեկների աշխատանքների արդյունավետ բարձրացմանը
- Ստեղծել արտադասարանական,երկարօրյա խմբակներ
- Կազմակերպել տարբեր սեմինարներ և հանդիպումներ,դրանց մեջ ներգրավելով նաև ծնողներին

2022-2023 ուսումնական տարում դպրոցն ունեցել է մեկ մեդալակիր և չորս գերազանցիկ:
2020-2021 ուստարի -12 գերազանցիկ
2021-2022 ուստարի-22 գերազանցիկ

Դպրոցի աշակերտների թիվը նախորդ տարիներին.



Դպրոցի աշակերտների թիվը առաջիկա տարիների համար ունի հետևյալ նախնական պատկերը.



Սա նշանակում է,որ զարգացումների պահպանման պարագայում կունենանք աշակերտների թվի աճ:

Ուսուցիչների ամբողջ հպարտությունը աշակերտների մեջ է, իրենց ցանած սերմերի աճի մեջ:

Դ.Մենդելեև

Այսօր մեր կրթական բարեփոխումների հիմնական նպատակներից ու պահանջներից մեկը աշակերտակենտրոն ուսուցումն է և այդ ուսուցման կենտրոնում կրթության բովանդակային բաղադրիչներին՝ գիտելիք,կարողունակություններ,արժեքային համակարգ, դիրքորոշում,հասնելն է:

Այս ամենին հասնելու համար առաջնային պլան է մղվում սովորեցնել սովորելու խնդիրը, նորարարական մեթոդներն ու հնարները: Նախատեսվում է որակյալ կրթություն ապահովելու,սովորողների կարողունակություններ՝ կոմպետենցիաները զարգացնելու համար կատարել հետևյալ աշխատանքները.

1.Խթանել հանրակրթական պետական չափորոշիչի ներդրման լավագույն փորձառությանն ուղղված նախաձեռնությունը:
2.Դասապրոցեսում ընդլայնել նորագույն տեխնոլոգիաների և արդյունավետ մեթոդների ներդրումը,որը սովորողների մոտ ստեղծում է հրապուրիչ ուսուցողական միջավայր և զարգացնում է սովորողների միաժամանակ լսելու և տեսնելու կարողունակությունները:
3.Ձևավորել սովորողների մոտ վերլուծական,քննադատական և ինքնուրույն մտածելակերպի հմտությունները:
4.Զարգացնել ինքնուրույն նախագծային աշխատանքների, հետազոտական և ստեղծագործական գործունեությունը՝հասնելով չափորոշիչային պահանջների վերջնարդյունքներին:
5.Յուրաքանչյուր սովորողի ընդունակություններին և կարողություններին համապատասխան անհատական մոտեցում ցույց տալ:

Նպատակը՝
Պետական մտածելակերպ,կոմպետենտ և ազգային արժեքները գիտակցող քաղաքացու ձևավորում

Խնդիր՝
- Ուսումնառության որակի բարելավում
- Սովորողների մոտիվացիայի խթանում
- Արժեհամակարգի ձևավորում
- Սովորողների համագործակցությունների շրջանակների ընդլայնում

Նպատակի իրագործման ուղղություններ
- Սովորողներին տալ բավարար գիտելիքներ,կարողություններ և հմտություններ
- Զարգացնել քննադատական,վերլուծական և տրամաբանական մտածողությունը
- Զարգացնել ինքնուրույն կողմնորոշվելու և որոշումներ կատարելու կարողությունները
- Ընձեռնել հնարավորություն ստացած գիտելիքները կիրառելու ցանկացած իրավիճակում

Ռիսկերը՝
- Բուլինգի դրսևորումներ
- Թերագնահատել սեփական ուժերը
- Ինքնավստահության պակաս
- Մոտիվացիայի պակաս

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ՝

- Լինել հետևողական բուլինգի կանխարգելման ուղղությամբ
- Ուշադրության կենտրոնում պահել ավելի խոցելի գտնվող սովորողներին
- Սեր և մոտիվացիա առաջացնել ուսման նկատմամբ

Արդյունքների չափման մեխանիզմները՝

- Դպրոցում ստեղծել անվտանգ կրթական միջավայր
- Սովորողների նախասիրություններիվ ելնելով ստեղծել արտադասարանական խմբակներ
- Հետևողական լինել սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղված աշխատանքներին
- Իրականացնել մշտադիտարկում և վերահսկողություն

Ակնկալվող արդյունքները՝

- Սովորողը կունենա ազգային մտածելակերպ և ինքնագիտակցություն
- Կմտահոգվի ազգային և պետական խնդիրների լուծմամբ
- Կիմանա իր իրավունքներն ու պարտականությունները
- Կգիտակցի և կարժևորի ուսման դերն ու նշանակությունը

Անհրաժեշտ միջոցներ՝

- Մարդկային ռեսուրսներ
- Դպրոցի բյուջեից ֆինանսական միջոցեր տրամադրել յուրաքանչյուր խմբակին
- ՏՀՏ միջոցներ

Պատասխանատուներ՝
Տնօրեն,փոխտնօրեն,համակարգող,մանկավարժական աշխատակազմ

Ժամկետ՝ 2024-2029թթ.

Գնահատման սանդղակ

Գործողություններ	Կատարողական			
	ոչ բավարար	բավարար	լավ	գերազանց
	0-25 %	25-50 %	50-75 %	75-100 %

5.6 Մանկավարժական համակազմը: Մանկավարժական համակազմի որակական բարելավումը

Դպրոցում աշխատում են 24 մանկավարժներ:Բոլորն ունեն բարձրագույն կրթություն,համապատասխան որակավորում և փորձառություն:Միայն մեկ ուսուցիչ ունի միջին մասնագիտական կրթություն,ով 2023 թվականին մասնակցել է կամավոր ատեստավորմանը և հաղթահարել սահմանված շեմը: Այսօր շարունակում է իր գործունեությունը դպրոցում `դասավանդելով ՆԶՊ առարկան:Դպրոցում երեք ուսուցիչ մասնակցել են կամավոր ատեստացիային և այսօր վարձատրվում են համապատասխան սանդղակով:

Դպրոցի մանակավարժական համակազմի որակական բարելավումը համարում ենք դպրոցի կարևորագույն գործառույթներից մեկը:Այն ենթադրում է ՀՀ կառավարությամբ հաստատված կարգի պահանջների կատարում,այսինքն՝

- Ուսումնասիրել,ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում
- Որակավորման տարակարգ չունեցող,սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման
- Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդատվություններ
- Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժական նորագույն նվաճումներին,կազմակերպել սեմինարներ,մանկավարժական-մեթոդական ընթերցումներ
- Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը
- Կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով:
- Ապահովել մանկավարժների ձգտումը իրենց գործունեությամբ և ստեղծագործական մտածելակերպով կատարելագործելու ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական համակարգի աշխատանքները՝ վերազինելով կրթության բովանդակային կառուցվածքը:

Կրթության բովանդակային կառուցվածքը հետևյալն է `

- Դասավանդման նոր մեթոդները
- Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ապահովումը
- Մանկավարժական ներուժի ինքնակրթությունը
- Նյութատեխնիկական միջոցների ապահովումը

Այս ամենը կնպաստի կրթության որակի արդյունավետ բարձրացմանը:



Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը

	25-29	**30-39**	**40-49**	**50-59**	60 և ավելի	**Ընդամենը**
2019-2020	7	**5**	**4**	**6**	**1**	**23**
2020-2021	6	**4**	**3**	**7**	**3**	**23**
2021-2022	6	**4**	**3**	**6**	**4**	**23**
2022-2023	1	**8**	**3**	**5**	**6**	**23**
2023-2024	1	**9**	**3**	**5**	**6**	**24**

Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ ունեցող ուսուցչին բնորոշ են հետևյալ պահանջները.

- Ինքնակրթությամբ զբաղվող
- Կարգապահությունը պահպանող
- Անձնական օրինակ ծառայող
- Պահանջկոտ
- Արդարացի որոշումներ կայացնող
- Ուսուցման գործընթացին օժանդակող,աջակցող,հետևող և օգնող
- Ինքնուրույն աշխարհայացք ձևավորող
- Բարձր արժեքներին տիրապետող
- Համագործակցային,հաղորդակցման և ղեկավարման հմտություններ ունեցող

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակներ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Փորձի փոխանակում սկսնակ ուսուցիչներին • Ինքնակրթությամբ զբաղվող ուսուցիչների առկայություն • Կամավոր ատեստավորում /երեք ուսուցիչ արդեն մասնակցել է կամավոր ատեստավորման/ • Ուսուցիչների մասնակցությունը ուսումնական հաստատության գործունեությանը վերաբերվող հարցերի քննարկմանն ու լուծմանը • ՀՊՉ-ին համապատասխան մշակում և իրականացնում են թեմատիկ պլաններ,դասապլաններ • Ընտրում և կիրառում են այնպիսի մեթոդներ և հնարքներ,որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակը • Պահպանում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ,ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները	• Չեն դիմում որակաորման տարակարգ ստանալու • Խուսափում են մասնակցել կամավոր ատեստավորմանը • Ֆինանսական միջոցների սղություն մանկավարժներին գնահատելու,արժևորելու և խրախուսելու • Մանկավարժներ,որոնք բավարարվում են իրենց ունեցած գիտելիքներով և խուսափում են նորարարություններից • Մանկավարժներ,որոնք ինքնավստահ են ձեռք բերված գիտելիքներով և չեն զբաղվում ինքնակրթությամբ

Ժամանակակից պահանջին համապատասխան մանկավարժներ դպրոցում ունենալու համար հարկավոր են այնպիսի գործողություններ,որոնք ուղղված

կլինեն մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը:

Նպատակ՝
Մանկավարժների որակավորման բարձրացում,կամավոր ատեստավորման, տարակարգերի և այլ վերապատրաստումների միջոցով

Խնդիր՝
Մանկավարժական համակազմի դասավանդման որակների մասնագիտական արդիականացում և բարելավում

Նպատակին հասնելու ուղիները՝

- Կազմակերպել փոխադարձ դասալսումներ
- Բաց դասերի անցկացում
- Դաս-միջոցառումների կազմակերպում
- Փորձառու ուսուցիչների և սկսնակ ուսուցիչների հետ համատեղ դասերի կազմակերպում
- Ինտելեկտուալ վիկտորինաների կազմակերպում
- Ներառարկայական և միջառարկայական մրցույթների կազմակերպում
- Մեթոդմիավորումների նիստերին ակտիվ քննարկումներ,վերլուծություններ
- ՏՀՏ-ի և դիդակտիկ պարագաների օգտագործումը դասապրոցեսի ընթացքում

Հնարավոր ռիսկեր՝

- Լաբորատորիաների բացակայություն,նյութատեխնիկական բազայի սղություն
- Թույլ ինտերնետային կապի առկայություն
- Ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում լիարժեք օգտվել ՏՀՏ-ից
- Մարզագույքի բացակայություն
- Աշխատանքային գերծանրաբեռնվածություն
- Մոտիվացիայի ոչ բավարար մակարդակ

Ռիսկերը մեղմացնող գործողություններ՝

- Ինտերնետային կապի հզորացում
- Կազմակերպել սեմինարներ մեդիագրագիտության և կիբեռանվտանգության թեմայներով,ապահովել բոլոր այն ուսուցիչների ներկայությունը,ովքեր ունեն դժվարություններ ՏՀՏ կիրառելու մեջ
- Օգտվել վաստակավոր և փորձառու ուսուցիչների փորձից,զարգացնել մանկավարժների պատրաստվածությունը բնական աղետներին համաճարակային իրավիճակներում ճիշը կողմնորոշվելուն և արձագանքելուն
- Մոտիվացնել ուսուցիչներին,խրախուսել և արժևորել նրանց օրենքով սահմանված կարգով

Նյութատեխնիկական հնարավորություններ և պայմաններ

- Մարդկային ռեսուրսներ
- Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ

- Համակարգիչներ,պրոյեկտոր և ժամանակակից միջոցներ
- Անհրաժեշտ գրքեր,մեթոդական ձեռնարկներ

Արդյունքների չափման մեխանիզմներ՝

- ՏՀՏ-ներին և մեդիագրագիտությանը տիրապետող մանկավարժների խումբ
- Նոր ՀՊՉ-ին տիրապետող և լավագույն փորձի ներդրում
- Վերապատրաստումներին և մրցույթներին մասնակցելու հարցեր և հաշվետվություններ

Ակնկալվող արդյունքները՝

- Ունենալ ՏՀՏ-ից օգտվելու ունակ ուսուցիչներ
- Մանկավարժների մեթոդական աշխատանքների որակական բարելավում
- Կամավոր ատեստավորմանը մասնակցելու ուսուցիչների աճ
- Մանկավարժների մասնագիտական որակի բարձրացում
- Ունենալ ստեղծագործ և բանիմաց մանկավարժներ

Պատասխանատուներ՝
Տնօրեն, փոխտնօրեն

Ժամկետ՝ 2024-2029թթ.

Գնահատման սանդղակ

Գործողություններ	Կատարողական			
	ոչ բավարար	բավարար	լավ	գերազանց
	0-25 %	25-50 %	50-75 %	75-100 %

Աշխատակազմի արժեվորման ,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Ուժեղ կողմեր	*Թույլ կողմեր*
• Մանկավարժները համախմբված են մեկ նպատակի շուրջ • Մանկավարժական բանիմաց համակազմ՝ պատրաստ համագործակցային աշխատաոճին և	• Տարակարգ չունեցող ուսուցիչներ • Փոխադարձ դասալսումների և քննարկումների պակաս • Մեթոդմիավորումների և նորարարական ներուժի ոչ ամբողջական իրացում

նորարարական բարեփոխումներին • Մանկավարժական առողջ մթնոլորտ,թիմային գործունեություն	• ՏՀՏ-ին թույլ տիրապետող ուսուցիչներ

Աշխատակազմի արժևորումը,խրախուսումը և ինքնակրթությունը այսօր առաջնային քայլերից մեկն է կրթության որակի բարելավման ճանապարհին,որով պայմանավորված է դպրոցի վարկանիշը:Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը դպրոցի ռազմավարություններից մեկն է:Դպրոցը կարևորում է անձնակազմի յուրաքանչյուր անդամի դերն ու նշանակությունը:
Ուսուցիչների ինքնակրթության ,մասնագիտական հմտությունների զարգացման համար կարևոր է մոտիվացնել ուսուցիչներին վերապատրաստվելուն և ինքնազարգացմամբ զբաղվելուն:Շարունակաբար խթանել ուսուցիչների որակավորման,արժևորման,խրախուսման բարձրացման հնարավորությունները,բարելավել դպրոցի գրավչությունը,բարձրացնել ուսուցիչների հեղինակությունը,խթանել մանկավարժների ստեղծագործական գործունեությունը,սահմանել բարոյական և նյութական խրախուսման ձևեր:
<Հանրակրթության մասին> օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է;որ մանկավարժական աշխատողների համար ուսումնական հաստատության;նրա հիմնադրի;կրթության պետական լիազորված մարմնի,տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների;սոցիալական գործընկերների;կազմակերպությունների,անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝

- շնորհակալագիր
- գովասանագիր
- դրամական խրախուսում
- ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր

Նախատեսում եմ իմ գործունեության ընթացքում աջակցել և ոգևորել մանկավարժներին մասնակցելու կամավոր ատեստավորմանը,կանգնած կլինեմ յուրաքանչյուր ուսուցչի կողքին,կգնահատեմ և կխրախուսեմ նրանց կատարած անձնվեր աշխատանքը:

Գնահատման սանդղակ

Գործողություններ	Կատարողական			
	ոչ բավարար	բավարար	լավ	գերազանց
	0-25 %	25-50 %	50-75 %	75-100 %

5.7 Համագործակցումը համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Համագործակցությունը կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ դպրոցում առաջնային և կարևոր դեր ունի,ինչը խթանում է սովորողների սոցիալական զրգացմանը, քաղաքացիական գիտակցության ձևավորմանը: Համագործակցությունը նպաստում է նախաձեռնությունների իրագործմանը:Համագործակցությունը հասարակական տարբեր կառույցների հետ խթան է հանդիսանում սովորողների սոցիալական դրսևորումների ինտեգրմանը,զարգացմանը և քաղաքացիական գիտակցության ձևավորմանը:Սվերդլովի միջնակարգ դպրոցը սերտ համագործակցում է համայնքի հետ ամենատարբեր աշխատանքներում,աջակցում համայնքում կազմակերպած միջոցառումներին, հաճախակի համայնքի ներկայացուցիչներին հրավիրում է մասնակից լինելու և դիտելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին , ազգային տոներին:

Մասնակցել եմ 2010թ. ԱՄՆ ՄԶԳ-ի «Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի» և «Ակտիվ քաղաքացու ձևավորման» դասընթացներին,2016-2017թթ. «Ներառական կրթություն. կրթություն բոլորի համար» դասընթացներին,2022թ. «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի կողմից կազմակերպված դասընթացներին և իմ ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների շնորհիվ ակտիվ մասնակցություն եմ ունեցել դպրոց-համայնք համագործակցության ամրապնդմանը:Մեծ ուշադրություն եմ դարձրել և շարունակում եմ դարձնել հատկապես ԿԱՊԿՈՒ սովորողներին,նրանց ընտանիքներին, բազմազավակ, կարիքավոր ընտանիքներին և հաղորդակից եմ լինում նրանց կարիքներին ու խնդիրներին,փորձում եմ լինել հնարավորինս աջակցող,օգնող,սատարող:

Դպրոց-համայնք կապերի համագործակցության շնորհիվ մեծ ուշադրություն է դարձվում նաև Սվերդլով գյուղի պատմամշակութային արժեքների պահպանմանն ու բարեկարգման աշխատանքներին:

Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ համայնքի կարիքների հետազոտման համար,որը լայն հնարավորություն է ընձեռնում ձևավորել ակտիվ քաղաքացի լինելուն և աչալուրջ լինել համայնքի բարեկարգման աշխատանքներին:

Դպրոցը համագործակցում է նաև կրթության կառավարման լիազոր մարմինների հետ՝ ԿԶՆԱԿ հիմնադրամի, ԿՏԱԿԻ,ԳԹԿ կենտրոնի,մենթոր դպրոցների,ՀՀ իրավապահ մարմինների,ՀՀ պաշտպանության նախարարության,Ոստիկանության,ԱԻՆ-ի,ՏՄԱԿ-ի,Արմաթ ինժեներական լաբորատորիաների հետ:
Այս համագործակցության շրջանակների ընդլայնումը ևս համարում եմ իմ գործունեության առաջիկա ուղղություններից մեկը և նախատեսում եմ բարելավված համագործակցություն՝ ստորև ներկայացված կառույցների հետ:



Դպրոցը համագործակցում է նաև շահառու այլ խմբերի հետ: Հաստատությունն ընդլայնում և ամրապնդում է ընտանիք-դպրոց-համայնք կապերը, առաջնորդվում և իր գործունեությունն իրականացնում է՝ ելնելով ունեցած մարդկային ռեսուրսներից, ներուժից և ենթակառուցվածքների հնարավորություններից:

Դպրոցի մարդկային ռեսուրսները՝ դպրոցի անձնակազմն է,որը բաղկացած է 35 աշխատողից. վարչական աշխատող՝ երեք,ուսուցիչներ 24 ՝ բարձրագույն մանկավարժական կրթությամբ և համապատասխան

որակավորմամբ , ,հաշվապահ-1,դաստիարակ-1,ուսումնաօժանդակ աշխատող-11 :

Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման լիազոր մարմինների հետ • Ակտիվ մասնակցում է ՏԻՄ-ի կազմակերպած ծրագրերին՝ ռազմահայրենասիրական, սպորտային,մշակութային • Հանագործակցում է հարակից դպրոցների հետ • Համագործակցում է շահառու կազմակերպությունների,կրթության ոլորտում շահագրգիռ կառույցների և խորհրդակցական մարմինների հետ • Դպրոցում առկա է պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթեր և դրանք վարվում է ըստ սահմանված • Ուսուցիչները մասնակցում են կրթության կառավարման մարմինների կողմից կազմակերկված խորհրդակցություններին, • միջոցառումներին,հանդիպում-ներին, սեմինարներին	• Թույլ է կապը հասարակական կազմակերպություններ ի հետ • Սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցում համայնքի ներդրումները բավարար չեն • Չկան անհատ բարերարների ներդրումներ,որոնք կնպաստեն նյութատեխնիկական բազայի համալրմանը և շենքային պայմանների բարեկարգմանը

Նպատակ՝

Հանրակրթության համակարգում պահանջների միասնականության և բոլոր շահառուների փոխհամագործակցության ապահովումը պետական քաղաքակրթականության շուրջ՝մշակելով և ներդնելով համագործակցության արդյունավետ մեխանիզմներ

Խնդիրները՝

- Ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց համագործակցությունը
- Տեղական ինքնակառավարման մարմին-դպրոց կապի ամրապնդում
- Գտնել դպրոցի մանկավարժների և սովորողների կրթությանը նպաստող կազմակերպություններ

Նպատակին հասնելու ուղիներ՝

- Կազմակերպել հանդիպումներ,սեմինարներ,որտեղ ծնողներին կներկայացվեն դպրոցի գործունեության վիճակի,ծրագրերի,ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին
- Դասղեկների միջոցով տեղեկանալ սովորողների ընտանիքների սոցիալապես անապահով ընտանիքների մասին

- Աջակցել ծնողներին ծնողավարման աշխատանքների մեջ
- Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ և հանդիպումներ դպրոցի մանկավարժական համակազմի հետ
- Կազմակերպել համատեղ միջոցառումներ և նախաձեռնություններ՝ մշակութային,սպորտային ,համայնքային նշանակության
- Խթանել համագործակցությունը կրթական տեղական կառույցների հետ,մասնակցել մեթոդական ,գործնական ժողովների,փորձի փոխանակման միջոցառումների
- Կատարելագործել ՏՀՏ գործիքների կիրառումը շահառու-դպրոց համագործակցության գործընթացներում

Հնարավոր ռիսկեր՝

- Ծնողների պասիվություն ուսուցման և դաստիարակչության հարցերում:Ծնողավարության պարտականությունների թերացում
- Աշխատանքային պարտականությունները կատարելու թերացում,արտաքին միջամտություններ

Ռիսկերը մեղմացնող գործողություններ՝

- Ծնողական ժողովների ժամանակ իրազեկել ծնողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին
- Կազմակերպել ՏԻՄ-ի հետ անհատական հանդիպումներն ու խորհրդատվությունները
- Մշտապես ապահովել կապի և ինֆորմացիայի փոխանակում,փոխադարձ վստահություն և համագործակցություն ի շահ դպրոցի աշխատանքների գործունեության

Արդյունքների չափման մեխանիզմներ՝

- Սեմինարների և քննարկումների արդյունքում նախաձեռնող ծնողներ,համայնքի անդամներ և կրթության շարունական ընթացք,տնօրինության մշտադիտարկումներ

Ակնկալվող արդյունքներ՝

- Նախաձեռնող քննարկող խնդիրներին լուծումներ առաջարկող ծնողներ
- Դպրոցի նկատմամբ մտահոգված համայնքի բնակիչներ
- Կրթական գործընթացի որակի բարձրացում և շարունակականություն

Միջոցներ՝

- Մարդկային ռեսուրսներ
- ՏՀՏ ծրագրեր և նախագծեր

Պատասխանատուներ՝

Տնօրինություն,դասղեկներ

Ժամանակացույց՝
2024-2029թթ.

5.8 Ուսումնական միջավայր

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է:Ուսումական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների,գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է:Դպրոցում ստեղծված ուսումնական միջավայրը հնարավորություն չի ընձեռնում ամբողջությամբ նպաստել ինտերակտիվ կրթությանը և նոր մեթոդների կիրառմանը:Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի, սարքավորումների, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Որպեսզի ուսումնական գործընթացը ձանձրալի չլինի,պետք է սովորողների համար ստեղծել անվտանգ, ապահով,հարմարավետ, մոտիվացնող ուսումնական միջավայր:Դպրոցը կարող է ուժեղ լինել մի ուղղությամբ,բայց այդ ուժը կթուլանա, մեկ այլ ուղղության թույլ լինելու պատճառով:Այսօր կրթության միջոցով կարելի է հասնել հաջողության:Ուստի զարգացման ծրագրում պլանավորված են քայլեր,որոնք միտված են ամբողջացնելու նկարագրված ուսումնական միջավայրը:

Անհրաժեշտ է ներդնել ժամանակակից աշխարհի լավագույն փորձը և ստեղծել ուսուցման համար անհրաժեշտ նորարարություններ և ուսումնական նոր միջավայր:Այսօր հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը սահմանափակ է,քանի որ չկան բավարար հարմարեցված ֆիզիկական և ուսումնական դասարաններ,մարզադահլիճներ և խաղահրապարակներ:Այսօր մշտական հոգածության խնդիր է սովորողների առողջության պահպանումը:Դպրոցում վերահսկվում են բացակայությունները և պահպանվում են հակահամաճարակային կանոնները:Անհրաժեշտության դեպքում դպրոցը պատրաստ է անցնելու հեռավար ուսուցման:

Ուսումնական միջավայրի ներկա վիճակը համառոտ.

- Դպրոցի շենքը տիպային է,սակայն այն մասնաշենքը որտեղ ուսումնական արհեստանոցները,լաբորատորիաները և առարկայական կաբինետներն են, ունի հիմնանորոգման կարիք և չի գործում:Գ մասնաշենքի հիմնանորոգումն ու շահագործումը հնարավորություն է լաբորատորիաների առկայության համար թե՛ որպես տարածք և թե՛ որպես առանձին կաբինետներ
- Դպրոցն ունի մարզադահլիճ,սակայն լիովին անմխիթար վիճակում է , կարիք կա հիմնանորոգման
- Դպրոցը մասնակի ապահովված է տեխնիկական միջոցներով, սակայն չկան առարկայական լաբորատորիաներ և սարքավորումներ
- Հանդիսությունների դահլիճը նորոգված է,սակայն կահավորված չէ
- Աշակերտները ապահովված են դասագրքերով, ուսումնական գրականությամբ
- Դպրոցում գործում է գրադարան,որը հարուստ և հագեցած է ուսումնաօժանդակ ձեռնարկներով,պաստառներով պարբերաբար համալրվում է նոր տպագրվող գեղարվեստական գրականությամբ և մեթոդական ձեռնարկներով:
- Գրադարանը վերանորոգված չէ, չունի ընթերցասրահ,առանձին համակարգիչ և ինտերնետ կապ:Զարգացման ծրագրի առաջնային կետերից եմ համարում նաև ժամանակակից տեխնոլոգիաներով հարուստ գրադարանի ստեղծումը դպրոցում,որն ուսումնական միջավայրի կարևոր

կենտրոններից է և խթան կհանդիսանա աշակերտների մոտ բարձրացնելու ընթերցանության հանդեպ սերը,ինչը կնպաստի նաև կրթության որակի բարձրացմանը:

- Դպրոցում ձևավորվել են հասարակական այնպիսի հարաբերություններ,որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին
- Դպրոցում ձևավորված է սովորեցնելու և սովորելու ավանդույթը

Դպրոցում աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքները զուգորդվում են բազմաբնույթ դաստիարակչական միջոցառումների կազմակերպմամբ, որոնք խթանում են հայեցի, ազգանվեր դաստիարակությանը: Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը մշտապես եղել է դպրոցի ուշադրության կենտրոնում:Գործում է ՆԶՊ-ի կահավորված դասասենյակ,իսկ ուսումնական զենքը օգտագործվում է գործնական հմտություններ զարգացնելու նպատակով:
Դպրոցն ունի մարզական լավ ավանդույթներ:Աշակերտները հաճույքով են մասնակցում ֆիզկուլտուրայի դասերին, մարզական միջոցառումներին, հաճախում են խմբակների՝ շախմատի, ընթերցանության, առողջ ապրելակերպի, ֆուտբոլի, թատրոնի, կիբեռանվտանգության: Դպրոցում բացի այս խմբակներից աշակերտները հաճախում են նաև սպորտային այլ խմբակների:

Քանի որ դպրոցի մարզադահլիճը վերանորոգված չէ, այդ իսկ պատճառով ձմռան ամիսներին ֆիզկուլտուրայի դասերի արդյունավետությունը նվազում է:
Դպրոցում ուսուցանվում է երկու օտար լեզու՝ ռուսերեն և ֆրանսերեն: Յուրաքանչյուր ուսումնական տարի կազմակերպվում է ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումը,որը տեղի է ունենում այն ժամանակահատվածում,երբ Հայաստանում մեկնարկում են ֆրանկոֆոնիայի օրերը՝ մարտ-ապրիլ ամիսներին:

Ուսումնական միջավայրի ուժեղ ու թույլ կողմերը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Սովորեցնելու և սովորելու ավանդույթ • ԿԱՊԿՈՒ աշակերտների ինտեգրում • Հանդուրժողականության մթնոլորտ • Առողջ և բարոյահոգեբանական միջավայր • Բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում • Երեխաների իրավունքների, ժողովրդավարական արժեքների պահպանում • Ներքին կարգապահական կանոնների,այդ թվում վարքականոնների վերահսկողություն • Ուսուցողական պաստառների հագեցվածություն • Փորձառու և հմուտ մանկավարժների կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների բարձր մակարդակ	• Դպրոցը չունի ընթերցասրահ • Դպրոցը չունի ռեսուրս սենյակ ԿԱՊԿՈՒ սովորողների համար • Դպրոցի բակը անխնամ է,ծառեր ու ծաղկանոց չկա,զուրկ է գեղագիտական միջավայրից • Գույքն ու նյութատեխնիկական բազան ոչ բավարար վիճակում են,համակարգիչները հին են • Ֆիզկուլտուրայի դահլիճը վերանորոգված չէ և չունի

• Ուսումնական միջավայրը նպաստավոր է պայմանավորված շենքային պայմաններով,որոշակի անհրաժեշտ գույքով,լուսավորված դասասենյակներով	համապատասխան մարզագույք • Բնագիտական լաբարատորիաներ չկան,համալրված չեն համապատասխան նյութատեխնիկական բազայով • Էլեկտրոնային գրատախտակներ առկա չեն

Բազմակարծիք,ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Բազմակարծիք,ներառական և մասնակցային կրթությունը բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի ներառումը:Այդ իսկ պատճառով այսօր էլ ավելի է մեծացել պատշաճ ներդրումների,ռազմավարությունների և չափորոշիչների մշակման պահանջը: Այսօր հանրակրթական դպրոցներում առկա են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների սոցիալական և կրթական հմտությունների զարգացմանն ուղղված խնդրահարույց հարցեր.
1. Դպրոցների սոցիալական և ֆիզիկական միջավայրի հարմարեցումները
2.Ծնողների պատկերացումները,մոտեցումներն ու ակնկալիքները
3.Ծնող-համայնք-դպրոց գործընթացին պասիվ ներգրավվածությունը և համայնքի կարծրատիպային մտածելակերպը ներառական կրթության մասին:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում կարևոր է յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել հավասար պայմաններ՝ նրանց կարիքներին, խնդիրներին , առանձնահատկություններին,ցանկություններին ու պահանջմունքներին համապատասխան:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Մանկավարժների թիմային մասնակցությունը,որոնց աշխատանքների շնորհիվ ԿԱՊԿՈՒ սովորողները ստանում են հավասար և համընդհանուր կրթություն • ԿԱՊԿՈՒ սովորողները ակտիվ մասնակցում են դպրոցական միջոցառումներին	• Դպրոցի ներսում չկա թեքահարթակ • Առանձին ռեսուրս դասասենյակ հարմարեցված ԿԱՊԿՈՒ սովորողների համար • Ծնողների և նրանց ընտանիքի անդամների կարծրատիպային մտածելակերպի պատճառով

• Կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատողի,ինչպես նաև մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակիցների համագործակցային ուսուցումը • Առարկայական չափոչոշիչների,ծրագրերի և սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված ԱՈՒՊ-ը • Հետևողականություն սովորողների կողմից ուսումնական,սոցիալական,ֆիզիկական խնդիրներ ունեցող ընկերների նկատմամբ • Ձևավորված պատշաճ վարվելակերպ • Օրենքների բավարար իմացություն	նրանց ներգրավվածությունը ԿԱՊԿՈՒ սովորողների գնահատման,դաստիարակչական և կրթական գործընթացում • Նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների ինքնուրույն հաղթահարումն ու կազմակերպումը բավարար չէ • Սեփական պարտականությունների ցածր մակարդակ

Դպրոցում հալածանքի , օտարման, բռնության կանխարգելման վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Մարդասիրական փոխադարձ վերաբերմունք • Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ • Բուլինգի,հալածանքի,օտարման և բռնության բացառում • Ներքին կարգապահական կանոնների պահպանում • Ինքնազարգացման և հասարակական գործունեության դրսևորումների շարունակական զարգացում • Մանկավարժների և աշակերտների մասնակցությունը հասարակական ակտիվությունը խթանող,քաղաքացիական գիտակցության բարձրացմանը նպաստող ծրագրերին ու միջոցառումներին	• Ոչ բավարար տեղեկատվություն բուլինգի տեսակների և դրսևորումների մասին • Ծնողների ոչ ճիշտ պատկերացումները բռնության,հալածանքի, վնասակար սովորույթների կանխման վերաբերյալ • Երեխաների պաշտպանությանն ուղղված պասիվ մեխանիզմներ

Նպատակը՝

- Դպրոցի սոցիալական և միջավայրային պայմանների բարելավումը կստեղծեն նոր հնարավորություն ԿԱՊԿՈՒ երեխաների ներառումը կրթության գործընթացում՝ հաշվի առնելով նորանոր մեթոդաբանությունը,հավասար իրավունքները ու համընդհանուր մատչելիության չափանիշները
- Աջակցել ծնողներին ԿԱՊԿՈՒ երեխաների դաստիարակության,կրթության և համայնքի մեջ ինտեգրվելու,կարծրատիպային մտածելակերպը հաղթահարելու գործում
- Ուսուցիչների ուղղորդմամբ ուսումնական միջավայչի կենտրոնում սովորողների դերի բարձրացում ,իրազեկում և հաճախակի սեմինարներ կազմակերպում ծնողների,ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքների և համայնքի հետ
- Սովորողներ,անձի բազմակողմանի զարգացման համար ներդաշնակ պայմանների ստեղծում՝ հասարակական կյանքին լիարժեք ինտեգրվելու համար

Խնդիրները՝

- Բացահայտել, գտնել և ներգրավվել այն ԿԱՊԿՈՒ երեխաներին,որոնք մեծ դժվարությամբ են ինտեգրվում կրթության գործընթացում
- Հոգեբանամանկավարժական և տեղեկատվական աջակցություն ԿԱՊԿՈՒ երեխաներին և ընտանիքներին,որը պետք է լինի շարունակական
- Կոտրել կարծրատիպերը սեփական դիրքորոշման արտահայտման վերաբերյալ և նպաստել խոչընդոտներից կողմնորոշվելու կարողության ձևավորմանը
- Ուսումնական միջավայրը դարձնել բազմանպատակ և բաց
- Ստեղծել ժամանց ու արտադպրոցական կրթություն ապահովող միջավայր
- Զարգացնել սովորողների մոտիվացիան ապահովող և խթանող միջավայրը

Նպատակի իրագործման ուղիները՝

- ԿԱՊԿՈՒ սովորողների համար ռեսուրս դասարանի վերանորոգում,նյութատեխնիկական բազայի համալրում
- Դպրոցի շրջակա միջավայրի ցանկապատում,անվտանգության ապահովում,տեսախցիկների տեղադրում,կանաչապատում,ծառերի և ծաղկանոցի մշակում
- Աշակերտների և շրջանավարտների համախմբում ուսումնական հաստատության կարիքների շուրջ
- Համընդհանուր ներառական մոտեցում ցուցաբերել ԿԱՊԿՈՒ աշակերտներին, դասղեկի ժամերին անդրադառնալ բուլինգին, քննարկել երևույթը,խոսել դրա վատ ազդեցության մասին,ձևավորել պատշաճ վաչքագիծ ու վարվելակերպ
- Համագործակցել ընտանեկան դաստիարակության հարցերում ծնողների և ընտանիքի անդամների հետ և խրախուսել նրանց մասնակցության և ինտեգրմանը կրթական գործընթացներում,բազմակարծիք միջավայրի ստեղծմանը ապահովելու գործում

Հնարավոր ռիսկեր

- Ֆինանսական սղություն,լիազորությունների սահմանափակում
- Մարդկային ռեսուրսների ոչ ճիշտ կառավարում
- Մանկավարժների,սովորողների,ծնողների բնավորության կամային դրսևորումներ,որոնք խոչընդոտում են աշխատանքային գործունեության մեջ
- Բնական աղետներ,համաճարակ և պատերազմ
- Պահանջարկի և առաջարկի անհամատեղելիություն

Ռիսկերի նվազեցմանը ուղղված գործողություններ

- Ֆինանսական ռեսուրսների ճիշտ պլանավորում
- Արտակարգ և համաճարակային իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, արագ արձագանքելու գործողությունների ճշգրիտ համակարգում
- Ժամանակակից պահանջներին համապատասխան ծրագրերի իրականացում
- Բարձրացնել սովորողների,մանկավարժների և ծնողների կրթական, գիտակցական,մարդկային և հասարական փոխհարաբերությունների ընկալման մակարդակը

Արդյունքների չափման մեխանիզմներ

- ԿԱՊԿՈՒ սովորողների համար վերանորոգված սանհանգույց և դասարան ստեղծել,իսկ ուսումնական միջավայրը հարմարեցնել նրանց կարիքներին
- Իրազեկված ներառական արժեհամակարգով մանկավարժական և աշակերտական համակազմ
- Դպրոցում ապահովել ներառական կրթության և հավասարության սկզբունքը
- Դպրոցում և համայնքում հաղթահարել ներառականությանը խաթարող կարծրատիպերն ու վերաբերմունքը
- Սահմանել մշտադիտարկում ու վերահսկողություն

Ակնկալվող արդյունքներ

- Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ
- Բոլոր սովորողների հատկապես ԿԱՊԿՈՒ ներառական կարիք ունեցող աշակերտների համար համապատասխան անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով հագեցած միջավայր
- Ժամանակակից,մոտիվացնող,տրամադրող և բարեկեցիկ ուսումնական միջավայր
- Սովորողը որպես ՀՀ քաղաքացի կունենա ինքնուրույն մտածելակերպ,կրթության,ինքնակառավարման,ինքնազարգացման, հասարակական գործունեության դրսևորման և լիիրավ անդամի գիտակցության կատարելագործում

Անհրաժեշտ միջոցները

- Մարդկային ռեսուրսներ
- Բարերարների աջակցություն
- Դպրոցի բյուջետային և արտաբյուջետային միջոցներ
- ՏՀՏ ծրագրեր
- Ուսումնամեթոդական նյութեր,ձեռնարկներ

Պատասխանատուներ
Տնօրեն,փոխտնօրեն,համակարգող,մանկավարժական խումբ և ուսուցչի օգնական

Ժամկետ
2024-2029 թթ.

5.9 Կրթության որակը՝ ըստ սովորողների Ուսումնառության արդյունքների

«Կրթությունն ամենահզոր զենքն է,որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»

Նելսոն Մանդելա

Այսօր Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող կրթական բարեփոխումները միտված են այնպիսի կրթական համակարգի ստեղծմանը,որը կլինի արդյունավետ ,մրցունակ՝ հասարակական և տնտեսական զարգացման ակնկալիքները բավարարելու համար: Կրթության մեջ ցանկացած ներդրումը տվյալ պետության ապագայի մեջ է ներդրվում:Սա ամենամեծ և ամենակարևոր խթանն է:Յուրաքանչյուր պետության կրթված սերունդ նրա շարժիչ ուժն է.և՛ տնտեսության,և՛ առողջության, և՛ արդարության:Սվերդլովի միջնակարգ դպրոցում սովորում են 116 աշակերտ,որոնցից 2023-2024 ուստարում տարրական դպրոցում սովորում են՝ 46,հիմնական դպրոցում 53 և ավագ դպրոցում 17 աշակերտներ: 3 աշակերտ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներն են, նրանցից մեկը թեթև,երկուսը միջին ծանրության:2022-2023 ուսումնական տարում դպրոցն ունեցել է 4 գերազանցիկ,1 մեդալակիր և 3 շրջանավարտ ընդունվել է բուհ:Յուրաքանչյուր տարի նվազում է սովորողների առաջադիմությունը,աշակերտների մեջ ձևավորված է մրցակցությունը ոչ թե գիտելիքի ,այլ գնահատականի համար:Հանրակրթական նոր չափորոշիչի ներդրումով կարծում եմ աշակերտների մոտ կձևավորվի ճիշտ մտածելակերպ՝ մրցակցել ոչ թե գնահատականի,այլ գիտելիքի համար:2023-2024 ուստարում դպրոցի նախակրթարան են հաճախում 4 սաներ,այստեղ ևս նկատում եմ սաների թվաքանակի նվազում:
Այսօր դպրոցներում հանրակրթական նոր չափորոշիչի ներդրումը լայն հնարավորություններ է ստեղծում սովորողների մոտ տրամաբանական մտածողության, ինքնուրույն հետազոտության, ցանկալի վերջնարդյունքին հասնելու,ստեղծագործելու և եզրահանգումներ կատարելու հմտություններ զարգացնելու համար:
Բարձրորակ կրթություն ապահովելու համար պետք է օգտագործել ուսուցման ժամանակակից մեթոդները՝ պետական և առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:ԿԶՆԱԿ-ի կայքում տեղադրված պաշարները մեծ օգնություն են ուսուցիչների համար՝առարկայական թեմատիկ պլանավորումը կազմելու,դասապրոցեսն արդյունավետ իրագործելու համար:

Կրթության որակը կարելի է բարձրացնել աշխատանքների ճիշտ պլանավորմամբ,դասի նպատակի իրագործմամբ ու ակնկալվող արդյունքներին հասնելով:Կարևոր է մանկավարժների կողմից աշխատանքների կազմակերպման հատուկ մեխանիզմներ,ինչպես նաև դրանց արդյունքների մշտադիտարկման վերլուծություններ,քննարկումներ,որոնց միջոցով կբացահայտվեն թերությունները և կմշակվեն ուղիներ դրանք շտկելու համար:Կրթության որակի վրա մեծ ազդեցություն ունի մանկավարժների մեթոդապես պատրաստված լինելը,օրվա դասապլանը,որը գրված պետք է լինի չափորոշիչային պահանջներին համապատասխան,իսկ ԿԱՊԿՈՒ սովորողների համար առանձին ԱՈՒՊ:
Կրթության բնագավառի խնդիրներից է կրթության որակի բարձրացումը՝ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունն ու հավասար կրթություն ստանալու մատչելիությունը:
Կրթության որակի բարձրացման համար կարևոր են հետևյալ բաղադրիչները՝

- Սովորել սովորեցնելու անհրաժեշտությունը
- Ժամանակակից դասավանդման նոր մեթոդներին և տեխնոլոգիաներին տիրապետելը
- Կրթական և աշակերտակենտրոն հաճելի միջավայրի ապահովումը
- Դասալսումների և փորձի փոխանակման իրականացումը
- Հանրակրթական պետական չափորոշիչներին և հանրակրթական պետական ծրագրերին համապատասխան ուսուցման արդյունավետ մեթոդների ապահովումը
- Կրթության որակի բարձրացման համար ամենօրյա համալիր աշխատանքների իրականացումը ծնողական,մանկավարժական,աշակերտական խորհուրդների և համայնքի հետ
- Մեթոդմիավորումների կողմից պետական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան առարկայական թեմատիկ գրավոր աշխատանքների ժամկետների ու բովանդակության վերահսկումը
- Պարբերաբար մշտադիտարկումներ,դասալսումներ և քննարկումներ կատարելը, հայտորոշիչ գրավոր աշխատանքների միջոցով սովորողների մնացորդային գիտելիքների բացահայտումը
- Որակյալ կրթություն ապահովելու համար խմբակների և նախագծային աշխատանքների ծրագրերի կազմումը, կիրառումն ու վերահսկումը

Համոզված եմ, որ դպրոց-ուսուցիչ-աշակերտ-ծնող միասնությունը կարող է ապահովել անհրաժեշտ կրթական որակ և արդյունքներ.

«ՄԻԱՍԻՆ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ»

Կրթության որակի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Չափորոշիչային պահանջների կատարում • Միջառարկայական կապերի ըդհանրացում դասապրոցեսի ընթացքում;ինչպես նաև խաչվող ուղիների ապահովում • Նորարարական մեթոդների կիրառում • Ուսուցիչների պատասխանատվության բարձրացում;ինքնակրթություն • Շրջանավարտների մասնագիտական կողմնորոշում • ԿԱՊԿՈՒ սովորողների ներգրավումը և՛ դասապրոցեսին,և՛միջոցառումներին • Պարբերաբար դասալսումների,փոխադարձ դասալսումների արդյունքում կրթության որակի ցուցանիշների բարձրացում • ՏՀՏ-ի կիրառում	• ԿԱՊԿՈՒ սովորողների մասնագիտական կողմնորոշման բացակայություն • Կրթության նկատմամբ անտարբերություն • Գերազանց և առաջավոր սովորողների ցածր ցուցանիշ • Մրցակցության բացակայում • Օլիմպիադաներին և այլ մրցույթներին մասնակցելու ցածր ցուցանիշ • Համագործակցություն այլ դպրոցների ուսուցիչն երի հոտ և փորձի փոխանակում • Չկան լաբորատորիաներ,սարքավորումներ ,դիդակտիկ նյութեր

Նպատակը՝

Նոր ՀՊՉ-ին համապատասխան կրթական գործընթաց,կրթության որակի բարձրացում և ժամանակակից մարտահրավերներին դիմակայող կրթություն

Խնդիրները՝

- Սովորողների կարողություններին ու ցանկություններին համապատասխան կրթություն, ըստ չափորոշչային պահանջներին բավարարող
- Կրթության մատչելիության ապահովում և սահմանված վերջնարդյունքների ձևավորում

Նպատակին հասնելու ուղիները՝

- Նոր ՀՊՉ-ի ամբողջական ներդրումն ու յուրացումը ուսումնական պրոցեսում
- Փոխադարձ դասալսումների և ինտերակտիվ մեթոդների և ՏՀՏ-ների կիրառման վրա հիմնված դասապրոցեսի արդյունավետության բարձրացում
- Նպաստել ժամանակակից մեթոդների և նորարարությունների ներդրմանը
- Սովորողների նախասիրության և կարիքների ճիշտ գնահատումը
- Ուսման բարձր որակի խթանումը բոլոր դասարաններում և դրանով պայմանավորված նոր պահանջների իրագործումը
- Նպաստել և կազմակերպել տարբեր թեմաներով միջոցառումներ,ինտելեկտուլ և սպորտային մրցույթներ,ուսումնաճանաչողական էքսկուրսիաներ
- Խրախուսել առարկայական օլիմպիադաների մասնակցությանը

Հնարավոր ռիսկեր՝

- Թույլ ինտերնետային կապ
- Ոչ բոլոր ուսուցիչների հարմարվողականությունը նորարական տեխնոլոգիաներին
- Սովորողների ուսուցման արդյունավետության և կարիքների բավարարման ոչ ճիշտ գնահատում
- Ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների սղություն
- ՈՒսուցիչների և դասղեկների նախաձեռնողականության պասիվություն
- Կրթական ծրագրերում սովորողների հետաքրքրության և մասնակցության պասիվությունը

Ռիսկերը մեղմացնող գործողություններ՝

- Ուսուցման գործընթացում կիրառել տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաներ
- Կատարել սովորողների ուսումնառության արդյունքների շարունակական վերլուծություն
- Ապահովել ուսումնական պլանի համապատասխանեցումը սովորողների կարիքներին ու պահանջներին
- Ապահովել ուսումնադաստիարակչական պլանի կատարման վերահսկողություն
- Համագործակցել վարչատնտեսական համակարգողի հետ և հայթայթել ֆինանսական միջոցներ աշակերտներին և ուսուցիչներին խրախուսելու համար

Արդյունքների չափման մեխանիզմներ՝

- Նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան աշխատանքների իրականացում՝ հայտորոշիչ թեսթեր,թեմատիկ գրավոր աշխատանքներ,գործնական և նախագծային աշխատանքներ

- Խմբակների և երկարօրյա ուսուցման կազմակերպում
- Մեթոդմիավորման դասալսումների արդյունքների արձանագրություններ և հաշվետվություններ
- Օրվա պլանների ստուգում,ԿԱՊԿՈՒ աշակերտների առաջադիմութուն,մրցույթների և օլիմպիադաների արձանագրություն
- Վերահսկողություն տնօրենության կողմից

Ակնկալվող արդյունքները՝

- Կրթության մակարդակի որակական փոփոխություն
- Կրթական գործընթացի բովանդակային զարգացում
- Բազմակողմանի զարգացած և ինտելեկտուալ կարողունակություններով օժտված սովորողներ

Միջոցներ՝

Մարդկային և ֆինանսական ռեսուրսներ,ՏՀՏ տեխնոլոգիաներ

Պատասխանատուներ՝

Տնօրեն,փոխտնօրեն,մեթոդմիավորման նախագահներ և դասղեկներ

Ժամկետ՝

2024-2029 թթ.

Գնահատման սանդղակ՝

Գործողություններ	Կատարողական			
	ոչ բավարար	բավարար	լավ	գերազանց
	0-25 %	25-50 %	50-75 %	75-100 %

5.10 Տեխնոլոգիաներ և նորարարություններ

Դպրոցի գլխավոր դերակատարը և առանցքային կերպարը ուսուցիչն է: Դպրոցի ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումների և ատեստավորման շնորհիվ շարունակական է դառնում կրթության որակի բարձրացումը,նոր տեխնոլոգիաների զարգացումը ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների,ուսուցման նոր ձևերի մշակումը: Դպրոցի կողմից կարևորվում է ՏՀՏ-ի ներդրումը դասապրոցեսում: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործության,աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները,հեռավար ուսուցման ձևերը: Դպրոցի ուսուցչական կազմը առանց բարդությունների կարողանում է անցնել հեռավար ուսուցման՝ պայմանավորված երկրում ստեղծված ռազմական,աղետային և համաճարակային վիճակներով:
Այսօր արդեն անհրաժեշտության դեպքում դասերը կարող ենք վարել MS Teams միասնական կրթական հարթակի միջոցով, օգտագործելով նաև էլեկտրոնային կրթական ռեսուրսներ:Դպրոցում նորարարական փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Այսօր ուսուցիչը պետք է ժամանակ ունենա ՏՀՏ-ի նոր գիտելիքներ ստանալու,դրանք գործածելու,սխալներն ուղղելու և մոտեցումները վերանայելու համար:Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել,անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը,ինչու չէ,նաև շահագրգռել՝գնահատել և խրախուսել: Այս հիմնախնդիրները լուծելու նպատակով հարկ ենք համարում ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը,ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անահատական առաջընթացը: ՏՀՏ-ի կիրառումը դպրոցում և դպրոցավարության մեջ այսօր դարձել են հրամայական պահանջ և ուսուցման նորարարական կարևոր բաղադրիչ:Դպրոցում ներդրված նորարարություններից են Արմաթ ինժեներական լաբորատորիայի ստեղծումը,ինչպես նաև համագործակցությունը մեդիագրագիտություն և կիբեռանվտանգություն Լոռե կենտրոնների հետ:Դասապրոցեսը պետք է հարստացնել ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառությամբ,որի միջոցով ուսուցման արդյունավետությունը բարձրանում է:ՏՏ-ն հնարավորություն են ընձեռնում թե՛ մանկավարժներին և թե՛ սովորողներին մուտք գործել ուսուցողական միջավայր,որտեղ գոյություն ունեն անսահման քանակությամբ տեղեկություններ, ինչն էլ հնարավորություն է տալիս սովորողներին միաժամանակ լսել և տեսնել, գործնական գիտելիքներ ստանալ համացանցից:Դրանով բարելավվում և կատարելագործվում են ուսումնական գործընթացները:ՈՒսուցիչը դուրս է գալիս իր ավանդական կրթության տրամաբանությունից և սովորողի հետ միաժամանակ հաղորդակից է դառնում ուսուցման միջավայրում դասապրոցեսի մակարդակի բարձացմանը:Սովորողն ուսուցչին տեսնում է որպես իրեն օգնող,աջակցող,սատարող և հասկացող:

Տեխնոլոգիաներ և նորարարություններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Վերապատրաստումներին ակտիվ մասնակցող ուսուցիչներ • Դասապրոցեսում ՏՀՏ-ի կիրառում • Օնլայն հարթակներին տրիապետող ուսուցիչներ • Մեդիագրագիտությանը և կիբեռանվտանգությանը տիրապետող ուսուցիչներ	• Թույլ ինտերնետային կապ • Օնլայն հարթակներին չտիրապետող որոշ ուսուցիչներ • Հմակարգիչների պակաս • Էլեկտրոնային գրատախտակների բացակայություն • ՍՄԱՐԹ դասասենյակի բացակայություն

Նպատակը՝

- Դասավանդման մոտեցումների արդիականացում , նոր տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսի կազմակերպման գործում,ՏՀՏ միջոցների արդյունավետ կիրառում

Խնդիրները՝

- Ուսուցման և ուսումնառության տեխնոլոգիաների արդի միջոցների կիրառում և նոր մեթոդների շարունակական ներդրումը դասապրոցեսում
- ՏՀՏ-ից ուսուցիչների օգտվելու հմտությունների բարելավում
- ՏՀՏ-ը միջոցներից օգտվելու հմտությունների բարձրացումը և օգտագործումը
- ՏՀՏ-ը միջոցներով ուսումնական հաստատության փաստաթղթաշրջանառության կազմակերպումը

Նպատակին հասնելու ուղիներ՝

- Էլեկտրոնային կրթական ռեսուրսների ստեղծում և կիրառում
- Սովորողների և ուսուցիչների մեդիագրագիտության և կիբեռանվտանգության կարողունակությունների զարգացման նպատակով կազմակերպել զրույցներ և քննարկումներ
- Նոր սերնդի համակարգիչներով վերազինել նյութատեխնիկական բազան և խրախուսել մանկավարժներին մասնակցելու կրթական տարբեր դասընթացներին
- Ապահովել նոր տեխնոլոգիաների օգտագործումը դասապրոցեսների ընթացքում
- Սովորողների և մանկավարժների շրջանում նոր ՏՀՏ միջոցների օգտագործման հմտությունների բարելավվում կատարել

Հնարավոր ռիսկեր՝

- Պասիվություն ուսուցիչների մոտ,առավել ևս մեծահասակ ուսուցիչների մոտ
- Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն
- Թույլ ինտերնետային կապ և ծրագրային խափանումներ
- Ֆինանասական ոչ բավարար միջոցներ

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- Նորարարությունների և տեխնոլոգիաների աստիճանաբար օգտագործումը դասապրոցեսի ընթացքում
- Ֆինանսական միջոցների ձեռք բերում և ռեսուրսների արդյունավետ ճիշտ կառավարում
- Մասնագիտական աջակցության ապահովում և տնօրինության կողմից հետևողականություն
- Խրախուսման տարբեր ձևերի կիրառում

Արդյունքների չափման մեխանիզմներ

- Էլեկտրոնային մատյանների վարման ցուցանիշներ,մեթոդմիավորումների նիստերի արձանագրություններ
- Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ դասընթացների արդյունավետության բարձրացում
- Կրթության որակի,ուսուցիչների և սովորողների կարողունակությունների բարելավում
- Մշտադիտարկում և վերահսկողություն

Ակնկալվող արդյունքները՝

- Համակարգչային ռեսուրսներով հագեցված կաբինետ
- Բանիմաց,նորարարություններին համահունչ քայլող ուսուցիչներ և սովորողներ

Միջոցներ
- ՏՀՏ միջոցներով ապահովված ուսումնական միջավայր
- Համապատասխան նյութական բազա
- Համակարգիչներ և ֆինանսական ռեսուրսներ

Պատասխանատուներ
Տնօրեն,վարչատնտեսական համակարգող,ինֆորմատիկայի ուսուցիչ,ՏՀՏ նորարարություններին տիրապետող մանկավարժական խումբ

Ժամանակացույց 2024-2029թթ.

Գնահատման սանդղակ՝

Գործողություններ	Կատարողական			
	ոչ բավարար	բավարար	լավ	գերազանց
	0-25 %	25-50 %	50-75 %	75-100 %

6.Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները

Դպրոցի ուժեղ կողմը	**Դպրոցի թույլ կողմը**
Դպրոցի շենքը տիպային երկհարկանի է,ընդարձակ և լուսավոր դասասենյակներով Ունի ջեռուցման համակարգ Ապահովված է մշտական ջրամատակարարումով Վերանորոգված սանհանգույցներով, ճաշարանով և խոհանոցով Առկա է ինտերնետ կապ Դպրոցն ունի գրադարան,որը պարբերաբար համալրվում է նոր ուսումնաօժանդակ ձեռնարկներով Արմաթ ինժեներական լաբորատորիա, որը համակարգչային դասասենյակի հետ միասին է գործում ՆԶՊ դասասենյակը և շախմատի դասասենյակը գործում են միասին • Միջոցառումների դահլիճ,որը կոսմետիկ վերանորոգված է • Մարզադահլիճ	• Դպրոցի տարածքը ցանկապատված չէ,բակը զուրկ է գեղագիտական միջավայրից • Բնագիտական առարկաների համար լաբորատորիաներ չկան,որի պատճառով էլ հետաքրքրության պակաս կա տվյալ առարկաների նկատմամբ • Առարկայական դասարաններ չկան,պետք է տարանջատել ՆԶՊ-ի դասասենյակը շախմատի դասասենյակից,Արմաթ լաբորատորիան համակարգչային դասասենյակից • Գրադարանը վերանորոգված չէ, չունի ընթերցասրահ,ապահովված չէ ինտերնետ կապով, առանձին համակարգչով և ժամանակակից գրականությամբ • Ճաշարանը չունի համապատասխան կահավորում • Դասարանները վերանորոգված չեն,գույքը կիսամաշ է , ժամանակակից գրատախտակներով ապահովված չեն

• Կառավարման և խորհրդակցական մարմիններ • Մանկավարժական ուսումնակազմն ապահովված է բարձրագույն կրթությամբ և առարկայական որակավորում ունեցող ուսուցիչներով • Դպրոցն ապահովում է աշակերտակենտրոն և ժողովրդավարական մոտեցում	• Միջոցառումների դահլիճը չունի համապատասխան գույք • Մարզադահլիճը վերանորոգված չէ , չկա համապատասխան մարզագույք • ԿԱՊԿՈՒ սովորողների համար անհրաժեշտ ռեսուրսներ չկան • Առկա է ֆինանսական վիճակի սղություն • Ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցելու պասսիվություն • Խորհրդակցական մարմինների միջև համագործակցության պասսիվություն • Ծնողական խորհրդի ակտիվության պակաս ուսումնադաստիարակչական աշխատանքներում • Նկուղը,որը առկա է,բայց գտնվում է անմխիթար վիճակում,ունի հիմնովին վերանորոգման կարիք,որը կծառայի և՛ հրաձգարան, և՛ ապաստարան

Հնարավորություններ	Վտանգներ
• Նոր չափորոշիչներով սովորողների կարողունակությունների ձևավորում • Նոր նախաձեռնությունների և գաղափարների իրագործման համար հնարավոր պայմանների ստեղծում • Մանկավարժների սերտ համագործակցության կապի ապահովումը ուսուցիչ-ծնող-աշակերտ հարաբերություններում • Համագործակցությունը սովորողների և նրանց ընտանիքների հետ • Ֆինանսական հնարավոր ձեռքբերումները տարատեսակ նախագծային աշխատանքների և դրամաշնորհային ծրագրերի միջոցով	• Կրթության որակի ցածր ցուցանիշ,որը բխում է ուսումնառության նկատմամբ թե՛ծնողների և թե՛ աշակերտների անտարբերությունից • Ուսուցչի կատարած աշխատանքի ցածր վարկանիշ • Մանկավարժական կադրերի պակաս • Ֆինանսական բյուջեի սղություն • Աշակերտների թվի պակաս,որը պայմանավորված է երկրում ստեղծված արտագաղթով

7. Դպրոցի զարգացման նախընտրելի ուղղությունները

Դպրոցի զարգացման ծրագրում կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն,բացահայտվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը,առկա հիմնախնդիրները:
Զարգացման ծրագիրը գրելիս հանդիպումներ եմ ունեցել դպրոցի աշակերտական,ծնողական և մանկավարժական խորհուրդների հետ,որոնց առաջարկություններն ու կարծիքները արտացոլել եմ դպրոցի զարգացման ծրագրում:

Աշակերտական խորհրդի կողմից առաջարկություններ

- Առարկայական լաբորատորիաների ստեղծում
- Ընթերցասրահ
- Մարզական խմբակների ավելացում

Ծնողական խորհրդի կողմից առաջարկություններ

- Անգլերեն լեզվի ուսուցում,որպես երրոր օտար լեզու
- Սննդի կետի բացում միջին և ավագ դասարաններում սովորողների համար
- Խմբակների բացում

Մանկավարժական խորհրդի կողմից առաջարկություններ

- Նյութատեխնիկական բազայի համալրում
- Ինտերնետ կապի բարելավում
- Առարկայական լաբորատորիաների ստեղծում
- ՏՀՏ սարքավորումների համալրում

Դպրոցի զարգացման նախընտրելի ուղղություններից են.

- Համընդհանուր ներառական (հարմարեցված ուսումնական միջավայրի ստեղծում) կրթության ապահովումը:
- Յուրաքանչյուր անձի՝ անկախ ազգությունից, ռասսայից, սեռից,դավանանքից,քաղաքական հայացքներից,սոցիալական ծագումից հիմնական կրթության ապահովումը:
- Կրթության հասանելիությունը,տարածքային համաչափ զարգացումը:դպրոցի շենքային պայմանների բարելավումը, նյութատեխնիկական բազայի համալրումը,առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծումը,բազմակարծիք և աշակերտակենտրոն միջավայրի ապահովումը:

Դպրոցում հարկավոր է հաստատել հանրակրթության կազմակերպման հետևյալ սկզբունքները՝
1.Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգային հենքի վրա՝ համամարդկային արժեքների զուգորդմամբ:
2.Հանրակրթությունն իրականացվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:
3.Հանրակրթությունն իրականացվում է նոր չափորոշչային պահանջներին համապատասխան :

8.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ:ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ: ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

Զարգացման ծրագրի նպատակներն ու առաջարկվող խնդիրները բխում են հանրակրթության զարգացման ռազմավարական ուղղություններից և դպրոցի առաքելության ուղղություններից:

Առաջիկա 5 տարիների իմ գործունեության ընթացքում առաջնային եմ համարում՝

- Աշակերտական համակազմի կայուն աճի ապահովումը, նրանց որակյալ կրթության մատուցումը, կրթական չափորոշիչներին համապատասխան կարողունակությունների ձևավորման ապահովումը:
- Մանկավարժական համակազմի համախմբված, նպատակասլաց գործունեության կազմակերպումը, նրանց մասնագիտական պատրաստվածության շարունակական զարգացումը:
- Դպրոցի շենքային պայմանների շարունակական բարելավումը, նյութատեխնիկական միջոցների և ուսումնաօժանդակ նյութերի հարստացումը:
- Կառավարման համակարգի բոլոր օղակների հստակ և արդյունավետ գործունեության ապահովումը:
- Համագործակցության ակտիվացումը տարբեր կազմակերպությունների հետ: Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով՝ համապատասխան գործունեության ակտիվացումը:

Դպրոցի հիմնական խնդիրների լուծման ուղիները, պատասխանատուները, կատարման ժամանակացույցն ու ֆինանսական միջոցները

Առկա հիմնախնդիրները	Հիմնախնդրի լուծման գործողությունները	Պատասխանատուներ	Կատարման ժամանակացույց
Աշակերտական համակազմի աճի ապահովում: Որակյալ և մատչելի կրթության ապահովում:	Ծնողների հետ տարվող աշխատանքների ակտիվացում, աշակերտների նախասիրությունների և հետաքրքրությունների ուսումնասիրում և այդ աշխատանքների բավարարմանն ուղղված միջոցառումների (խմբակների, դասընթացների,աշակերտների	Տնօրեն Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ Ծնողական խորհուրդ Դասղեկներ	2024-2028

	հանգստի և ժամանցի կազմակերպում, որոնց միջոցով կարող է ձևավորվել հմտություններ և կարողունակություններ) իրականացում:		
Մանկավարժական համակազմի գործունեությանն բարելավում	Փորձառու ուսուցիչներից ձևավորել առաջնորդող խումբ, որը կհամակարգի փորձի փոխանակման, մասնագիտական կարողությունների բարձրացման, ուսուցման և գնահատման ժամանակակակից դասավանդման մեթոդների բարելավումն ու կիրառումը: Սահմանված կարգի համապատասխան իրականացնել ուսուցիչների ատեստավորումը, աջակցել կամավոր ատեստավորվել ցանկացողներին: Խրախուսել նորարարական նախաձեռնությունները, պարբերաբար կազմակերպել մրցույթներ:	Տնօրինություն Մեթոդական միավորումներ	2024-2029
Դպրոցի շենքային պայմանների բարելավում, տեխնիկական միջոցների և ուսումնաօժանդակ նյութերի ձեռքբերում: Արդիականցնել գրադարանը, ապահովել ինտերնետ կապով,	Նախակրթարանի, գրադարանի և հանդիսությունների դահլիճի ջեռուցման համակարգի կառուցում (1.5 մլն դրամ դպրոցի միջոցներից): Մարզադահլիճի նորոգում և ջեռուցման համակարգի կառուցում (2 մլն դրամ դպրոցի միջոցներից): Տանիքի հիմնանորոգման նախագիծ-նախահաշվի կազմում (0.5 մլն դրամ դպրոցի միջոցներից):	Կառավարման խորհուրդ Տնօրեն	2024-2026

համակարգչով, համալրել օժանդակ այլ գրականությամբ:	Դպրոցի ցանկապատի կառուցում (0.5 մլն դրամ դպրոցի միջոցներից): Հանդիսությունների դահլիճի կահավորում (0.5 մլն դրամ դպրոցի միջոցներից): Դպրոցի տանիքի հիմնանորոգում / լիազոր մարմնի աջակցությամբ/ (1 մլն դրամ դպրոցի միջոցներից):		2024-2025
	Նյութատեխնիկական միջոցների և ուսումնաօժանդակ նյութերի ձեռքբերում(2 մլն դրամ դպրոցի միջոցներից): Դպրոցի երրորդ մասնաշենքի հիմնանորոգում / լիազոր մարմնի աջակցությամբ/:	Կառավարման խորհուրդ Տնօրեն Լիազոր մարմին	2025-2026
Կառավարման համակարգի բոլոր օղակների հստակ և արդյունավետության ապահովում:	Համագործակից կազմակերպությունների աջակցությամբ բարելավման ծրագրերի իրականացում: Պարբերաբար խորհրդակցությունների կազմակերպում, կարևոր որոշումների համատեղ ընդունում: Ապահովել առողջ մթնոլորտ , աշխատանքային հարաբերություններ ուսուցիչ-աշակերտ, ծնող-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ օղակների միջև: Ծնողներին մասնակից դարձնել սովորողների կրթության և դաստիարակության գործընթացում: Բոլոր օղակների գործունեության թափանցիկության և պարբերաբար հաշվետվողականության ապահովում: Ըստ	Տնօրինություն Լիազոր մարմին Տնօրեն Դպրոցի խորհրդակցական մարմիններ Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ	2024-2029 2024-2029

Համագործակցության ակտիվացումը տարբեր կազմակերպությունների հետ:	լիազորությունների վերահսկողության հստակ իրականացում: Փոխադարձ վստահության,հարգանքի և փոխօգնության մթնոլորտի ձևավորում: Յուրաքանչյուր ծրագրի իրականացման պատշաճ լուսաբանում: Նոր ծրագրերի, հայտերի ներկայացում, քննարկում: Ակտիվ երկխոսություն հնարավոր աջակիցների հետ	Տնօրեն ,Կառավարման խորհուրդ	2024-2029

9. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռիսկերը ցանկացած նպատակի իրականացմանը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Ռիսկերի պլանավումը կարևոր է, քանի որ առանց ռիսկերի հաշվառման ամենալավ մշակված զարգացման ծրագիրը դժվար է իրականացնել:

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերն են՝

- Երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում
- Անսպասելի իրավիճակներ՝ համավարակ,պատերազմ,արտագաղթ
- Իրավիճակից դրդված՝ հեռավար կրթություն
- Հաստիքների և աշխատակազմի փոփոխություն

- Աշխատանքների իրականացման թույլ վերահսկողություն
- Ուսուցիչների վերապատրաստումների և կամավոր ատեստացիայի նկատմամբ անլուրջ վերաբերմունք
- Ծախսերի ու պահանջների անհամապատասխանություն

Ռիսկերի նվազեցման ուղիները՝

- Ֆինանսական ծախսերի վերանայում
- Իրատեսական աշխատանքների պլանավորում
- Աշխատանքային պատասխանատվության բարձրացում յուրաքանչյուր ոլորտում
- Յուրաքանչյուր ոլորտում ճիշտ առաջնորդի դերը
- Թերահավատության կարծրատիպերի կոտրում
- Միասնական թիմի և բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում

	Ռիսկեր	**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ**
1	Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ:	Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում, գտնել հովանավորներ, բարերաներ:
2	Սովորողների քիչ թվաքանակ: Սեփական ուժերի նկատմամբ թույր կարծիք	Սովորողների համար մոտիվացնող միջավայրի ստեղծում: Հետևել սովորողների առողջ ապրելակերպի,ճիշտ սնման կանոններին
3	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության ինքնակրթության, կամավոր ատեստավորման գործընթացի նկատմամբ ցածր հետաքրքրության դրսևորում, աշխատակազմի հավակնությունների ցածր մակարդակ:	Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին՝ մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով, ապահովել ինքնակրթությամբ զբաղվելու հնարավորություններ, ինքնավստահության բարձրացում,խրախուսել մասնակցել կամավոր ատեստացիային
4	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեությանը մասնակցելու պասսիվություն:	Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպան հարցերը:Նպաստել շահառու կողմերի ակտիվ ներգրավմանը,կարևորել համայնք-դպրոց կապը

5	Դպրոցի նյութատեխնիկական բազայի և շենքային պայմանների բարելավման համար արտաբյուջետային միջոցների չձևավորվելը և ֆինանսական հնարավորությունների ոչ բավարար լինելը	Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրեր իրականացնելու համար,փնտրել բարերարներ,օգտագործել ունեցած նյութատեխնիկական բազան

10. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության իրականացումը ամրագրված է որպես հաստատության կառավարման խորհրդի գործառույթ:

Վերահսկողություն իրականացնող մարմիններ են կրթության պետական կառավարման լիազորված մարմինը,տարածքային կառավարման մարմինը,տեսչական մարմինը,տնօրենը:Վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ է համեմատել և գնահատել կատարված որակական ցուցանիշները:

Յուրաքանչյուր տարի 2 անգամ խորհրդում կքննարկվի ծրագրի իրականացման ընթացքի տնօրենի հաշվետվությունը.

1. Նպատակներին ուղղված գործողությունների արդյունքները և դրանց հիմքերը
2. Չկատարված կամ թերի կատարված գործողությունները ,դրանց պատճառները
3. Փոփոխությունների և լրացումների առաջարկություններ
4. Հաղորդակցության և համայնքի հետ հարաբերությունների կազմակերպման մեխանիզմները:

Հեռանկարային զարգացման ծրագիրը նախատեսված է 5 տարվա համար և որքան էլ պլանավորած նպատակները, խնդիրները և գործողությունները ճշգրտորեն ներկայացված լինեն, ժամանակի ընթացքում, տարբեր գործոններով պայմանավորված, դրանք կարող են ենթարկվել փոփոխությունների՝ խորհրդի հավանությամբ:

Դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատումը կիրականացվի ցուցանիշների և չափանիշների համեմատական ներկայացմամբ: Ծրագրում ընթացիկ աշխատանքների և արձանագրված արդյունքների վերաբերյալ պարբերաբար կիրապարակվի տեղեկատվություն դպրոցի կայքի հայտարարությունների համար առանձնացված բաժնում և դպրոցական տարբեր միջոցառումների ժամանակ: Պարբերաբար հաշվետվություններով հաղես կգամ խորհրդակցական և կառավարման մարմինների նիստերում, կապահովեմ

հաշվետվությունների հասանելիություն և կներկայացնեմ ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերլուծություններ, քննարկումներ և առաջարկություններ:

Քանի որ ԴՀԾ-ը հեռանկարային պլանավորում է, հնարավոր են օբյեկտիվ պատճառներով որոշ բացթողումներ, նաև շեղումներ ըստ այդմ պետք է դրսևորել կառավարման հմտություն և ճկունություն:

Աշխատել եմ զարգացման ծրագիրը գրել իրատեսական:

Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշներ

Գործողություն		Ակնկալվող արդյունք	Կատարված է	Կատարված է թերի	Կատարված չէ
Դպրոցի շենքային պայմանների և տարածքի բարեկարգում	Ուսումնական հաստատության մասնակի վերանորոգում,տարածքի ցանկապատում,ծաղկանոցի ձևավորում Մարզադահլիճի վերանորոգում Նկուղի հիմնովին վերանորոգում Դպրոցի սանիտարահիգենիկ պայմանների պահպանում Թեքահարթակի կառուցում	Գրավիչ և հարմարավետ դպրոց,էկոլոգիապես մաքուր և խնամված բակ ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցում Ապաստարան Առողջ ապրելակերպի խթանում			
Նյութատեխնիկական բազայի հարստացում	Նյութատեխնիկական բազայի համալրում՝ համակարգիչներ,դիտակտիկ պարագաներ,սարքա	Կրթության որակի բարձրացում, սեր սպորտի նկատմամբ			

	վորումներ,մարզագույքի ապահովում				
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի շուրջ տարվող աշխատանքներ	Էլեկտրոնային մատյանի ժամանակին լրացումներ Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի ճիշտ վարում	Էլեկտրոնային մատյանի ճիշտ և ժամանակին վարում Գրագետ վարած իրավական ակտեր			
Սովորողների կարողությունների և հմտությունների զարգացում Կրթության որակի բարձրացում	Իրականացնել սովորողների ուսումնադաստիարակչական պլանով նախատեսված միջոցառումներ Սովորողների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի խթանում ՀՊՉ-ով սահմանված նպատակների և վերջնարդյունքների հասնում ԿԱՊԿՈՒ սովորողների ինտեգրում կրթական գործընթացներին Շնորհալի և տաղանդավոր սովորողների բացահայտում Նպաստել կոմպետենտ քաղաքացու ձևավորմանը	Բազմակողմանի զարգացած Դաստիարակված, խելացի , ակտիվ,նպատակասլաց շրջանավարտներ ԿԱՊԿՈՒ սովորողների առավել ներգրավումը կրթական գործընթացներին Որակապես նոր կրթության ապահովում			
Մանկավարժական համակազմի խրախուսման ,արժեվորման և մասնագիտական որակների բարձրացում	Մանկավարժական թիմի սերն ու նվիրվածությունը աշխատանքին Մանկավարժների ձեռքբերումների գրանցում և խրախուսում Կամավոր ատեստավորված ուսուցիչներ	Ինքնավստահ և բանիմաց ուսուցիչների թիմ Համարձակ և փորձառու մանկավարժական կոլեկտիվ			

	Նորարարություններ ի կիրառությունը և նոր ՀՊՉ-ին հստակ տիրապետելն ու ներդնելը դասապրոցեսում Մասնագիտական ինքնակրթությամբ և ինքնազարգացմամբ զբաղվելը				
Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի ստեղծում	ԿԱՊԿՈՒ սովորողներին ընդգրկել միջոցառումների և ուսումնադաստիարակչական գործընթացների մեջ Ուսումնական ծրագրերը,դասի պլանները հարմարեցնել ԿԱՊԿՈՒսովորողների պահանջներին ու կարիքներին Դպրոցում հաղթահարել ներառականությանը խոչընդոտող ֆիզիկական և սոցիալական խոչընդոտները Կազմակերպել սեմինարներ՝ նվիրված ներառական կրթությանը Համագործակցել տարածքային սպասարկող բուժանձնակազմի հետ	Ակտիվ մասնակցող ԿԱՊԿՈՒ սովորողներ խոսքի,մտքի ազատություն Բազմակարծության խրախուսում			
Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում	Պահպանել սովորողների հավասար իրավունքները Բացառել բուլինգը,հալածանքը,	Բարոյահոգեբանական և առողջ մթնոլորտ Մարդասիրական վերաբերմունք և			

	բռնությունը,օտարումը Պահպանել ներքին կարգապահական կանոնները Ուշադրության կենտրոնում պահել ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողներին Ստեղծել մարդասիրական և բարոյահոգեբանական մթնոլորտ	փոխադարձ հարգանք			
Կրթությունը կառավարող մարմինների, համայնքի,շահառու մարմինների հետ համագործակցություն Համագործակցություն կառավարման և խորհրդակացական մարմինների հետ	Համագործակցել իրավապահ մարմինների,համայնքի,կրթությունը կառավարող մարմինների հետ Ամրապնդել ծնող-դպրոց-համայնք կապը Կառավարման,ծնողական և աշակերտական խորհուրդների դերի բարձրացում Խորհրդակցական մարմինների իրավագիտությանն ուղղված սեմինարներ	Ակտիվ ծնողների ներգրավվածությունը սովորողների դաստիարակության գործում Համագործակցության ամրապնդում համայնքի հետ Ծնողական և աշակերտական խորհուրդների ձևականության բացառում			

ՏՀՏ և նորարարությունների իրականացում	Սովորողներին խրախուսել նորարարության համար Յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին,այդ նպատակով կազմակերպել սեմինարներ	Ժամանակի հետ համահունչ քայլող,բանիմաց մասնագետներ;նորարարական գաղափարներով օժտված սաներ և ուսուցիչներ			
Արտադպրոցական անաշխատանքների, երկարօրյա պարապմունքների կազմակերպում	Ստեղծել երկարօրյա խմբեր Ծնողներին ներգրավել արտադպրոցական միջոցառումներում,ինչպես նաև այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն	Ակտիվ ծնողներ Խելացի և բանիմաց սովորողներ			

11. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Համայնքի առանձնահատկություններին և սովորողների նախասիրություններին համապատասխան որակյալ և մրցունակ կրթական միջավայրի ստեղծում:
- Փորձառու մանկավարժական խմբի, նորարարական մասնագետների ընդգրկում:
- Աշակերտ-ուսուցիչ-ծնող-համայնք փոխհարաբերությունների ամրապնդում, սերտ համագործակցում,փոխօգնություն:
- Դպրոցի համալրում նորագույն տեխնոլոգիաներով:
- Նոր համակարգիչներով ապահովված համակարգչային դասասենյակ ստեղծում:
- Ներառական ,աշակերտակենտրոն ուսումնական միջավայրի ստեղծում:
- Հալածանքի,բռնության ,օտարման տարրերից զերծ միջավայրի ստեղծում:
- Սպորտային գույքով համալրված մարզադահլիճ:
- Վերանորոգված մարզադահլիճ ապահովում:
- Ակտիվ ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցում:
- Ժողովրդական սկզբունքներին համապատասխան դպրոցի խորհրդակցական մարմինների գործունեության ապահովում:

- Նոր ՀՊՉ-ի միջոցով կրթության որակի արդյունավետ բարձրացում:
- Պետական մտածողությամբ, ինքնուրույն կողմնորոշում ունեցող, քննադատական վերլուծություն կատարելու ունակ շրջանավարտի ձևավորում:
- Ցանկապատված,բարեկարգված,խնամված դպրոցական միջավայրի ստեղծում:
- ՏՀՏ-ի նպատակային օգտագործում:
- Կարգապահության կանոնների կիրառում և պահպանում բոլոր ոլորտներում:
- Կոնֆլիկտները հաղթահարող,հանդուրժող աշակերտներ:

12.Եզրափակում

Ես գիտակցում եմ այն պատասխանատվությունը, որն այսօր փորձում եմ հանձն առնել: Տնօրեն ընտրվելու դեպքում զերծ եմ մնալու միանձնյա որոշումներ կայացնելուց, կարևորելու եմ սերտ համագործակցությունը համայնքի, ծնողների, աշակերտների, մանկավարժների հետ և առաջնորդվելու եմ ժողովրդավարական ոճով՝ մեր առջև դրված նպատակներին հասնելու համար: Այս ամենն իրականացնելու համար հարկավոր է անշահախնդիր, տքնաջան ամենօրյա աշխատանք և նվիրվածություն, որի արդյունքում կունենանք դպրոցի առկա գրեթե բոլոր խնդիրների լուծում, ուսման որակի բարձրացում, դպրոցի շրջանավարտի նկարագրին համապատասխանող քաղաքակիրթ, հայրենասեր, բազմակողմանի զարգացած քաղաքացի:

Առաջնորդվելու եմ հետյալ կարգախոսով.

«Միասին ամեն ինչ կարող ենք»